

Դենիս Վասիլևն ընդդեմ Ռուսաստանի

Փաստեր

Գործի հանգամանքները

6. Դիմողը ծնվել է 1983 թվականին և ապրում է Մոսկվայում:

A. Դիմողի նկատմամբ բռնությունը և բուժումը

1. Դիմողի և նրա ընկերոջ նկատմամբ բռնությունը

7. 2001 թվականի հունիսի 29-ին դիմողը և նրա դասընկեր պարոն Ն.-ն երեկոն միասին էին անցկացնում: Մոտավորապես ժամը 23.30-ին նրանք գնացել են պարոն Ն.-ի տուն, քանի որ պարոն Ն.-ն, ով շաքարախտով էր տառապում, պետք է ստանար ինսուլինային ներարկում: Դրանից հետո նրանք նստել են տաքսի և գնացել դիմողի տուն:

8. Բակի միջով անցնելիս նրանց ձեռի են ենթարկել Մոսկվայի Արևմտյան վարչական շրջանի Շերբակովսկայա փողոցում՝ թիվ 16/18 շենքի մոտակայքում: Ծեծի ենթարկողը նրանց վրա հարձակվել է հետևից, և մինչև նրանք կարողացել են շրջվել՝ գլխին ստացել են ուժեղ հարվածներ, և ուշագնաց ընկել են գետնին: Նրանցից գողացել են բավականաչափ մեծ գումար, ձեռքի ոսկյա շղթա և բջջային հեռախոս:

9. Հարևանները զանգահարել են Մոկովինայա Գոռա ոստիկանական բաժանմունք: 2001 թվականի հունիսի 30-ին, առավոտյան ժամը 1.40-ին ոստիկաններ պարոն Զարովը և պարոն Վոլկովը ժամանել են դեպքի վայր: Նրանք ծառայում էին Մոսկվայի Արևմտյան վարչական շրջանի երկրորդ ոստիկանական բաժանմունքում, և նրանց գլխավոր խնդիրն էր ըստ առևտրային պայմանագրերի ապահովել բիզնես և մասնավոր սեփականության անվտանգությունը: Բացի դրանից, նրանք աշխատում էին նաև հարևանությամբ գործող ճանապարհային ոստիկանության բաժանմունքում:

10. Նրանց հայտարարությունների համաձայն՝ նրանք փողոցում տեսել էին երկու տղամարդու, որոնք, իրենց կարծիքով, հարբած էին: Նրանցից մեկը եղել է նստած, մյուսը՝ դեռ պառկած էր: Նկատվել են փսխումներ: Ոստիկանները հայտարարել են, որ իրենք իրավիճակի մասին զեկուցել են Մոկովինայա Գոռա ոստիկանական բաժանմունքի աշխատակցին և ասել նրան, որ պետք է կանչել շտապօգնություն կամ մասնագետներ, բժիշկներ:

11. Այնուհետև ոստիկանները դիմողին և նրա ընկերոջը քաշելով փողոցից մի կողմ են տարել և բերել թիվ 16/18 շենքի բակ: Ըստ Կառավարության՝ ոստիկանները թողել են դիմողին և Ն.-ին խոտերի վրա, դիմողը բողոքել է, որ իրենց դրել են աղբանոցի մեջ: Այդ ընթացքում արտագերատեսչական պահպանության բաժնի հերթապահը տեղեկացրել է աշխատակիցներին, որ ահագանգ է ստացվել, և կարգադրել է նրանց այն ստուգել: Նրանք այդ մասին տեղեկացրել են ոստիկանական բաժնին և լքել դեպքի վայրը:

12. Մոտավորապես ժամը 7.00-ին դռնապահներ Ի.-ն և Բ.-ն երկու երիտասարդ տղամարդ են տեսել աղբամաններից երեք-չորս մետր այն կողմ և փորձել են նրանց արթնացնել: Սակայն, երկուսն էլ եղել են անգիտակից վիճակում, սևահերը (պարոն Ն.-ն) կցկտուր բառեր էր ասում քթի տակ: Նրանք շտապօգնություն են կանչում:

13. Ժամը 8-ին բժիշկ Պ.-ն ժամանում է առաջին շտապօգնության մեքենայով: Տեսնելով երկու զոհերին՝ նա կանչում է մեկ այլ շտապօգնության մեքենա և սկսում է օգնություն ցույց տալ պարոն Ն.-ին, որն ուներ վերք և հեմատոմա՝ ձախ այտի վրա: Երբ պարոն Ն.-ն ուշքի է գալիս՝ բժիշկ Պ.-ն օգնում է նրան բարձրանալ մեքենա, որով տանում է նրան Մոսկվա քաղաքի թիվ 1 հիվանդանոց:

14. Այդ ընթացքում ժամանում է երկրորդ շտապ օգնության մեքենայով բժիշկ Չ.-ն: Դիմողին՝ դեռևս անգիտակից վիճակում, նա է տեղափոխում մեքենա և տանում Մոսկվա քաղաքի թիվ 33 հիվանդանոց:

2. Բժույժը թիվ 33 հիվանդանոցում

15. 9.05 հիվանդանոց բերվելուց հետո՝ դիմողն ախտորոշվում է ակնոհուլային թունավորում: Դաստակի և ճակատի վրա առկա վնասվածքներն ու վերքերը ևս նշվում են: Երկու ժամ անց նրան հետազոտում է նյարդավիրաբույժը:

16. 2001 թվականի հուլիսի 1-ին մինչև ժամը 17-ը դիմողը շարունակել է մնալ անգիտակից վիճակում, ինչպես նաև մերկ վիճակում՝ հիվանդանոցի միջանցքում՝ պատգարակի վրա:

17. 18.30-ին նրան վիրահատում են. կատարվում է գանգի երկկողմ ոսկրաշաղափում (տրեպանացիա):

18. 2001 թվականի հուլիսի 8-ին դիմողի մայրն իր որդուն հետազոտելու նպատակով հրավիրում է մասնավոր բժիշկ: Բժիշկը որոշում է, որ դիմողը գտնվում է կյանքին վտանգ սպառնացող վիճակում: Կոմայի մեջ գտնվող դիմողին շտապօգնության մեքենան տեղափոխում է Մոսկվայի Բուրդենկո զինվորական հիվանդանոց:

3. Բուժումը Բուրդենկո հիվանդանոցում և մասնակի վերականգնումը

19. 2001 թվականի հուլիսի 9-27-ը դիմողը գտնվել է կոմայի մեջ: 2001 թվականի հուլիսի 25-ին կատարվում է շնչափողահատում (վզակոթային շնչափողում վիրաբուժական օդափոխության ստեղծում) և տեղադրվում է խողովակ:

20. Կոմայից դուրս գալուց հետո նրան տեղափոխում են նյարդավիրաբուժական բաժանմունք, որտեղ նա ծանր վիճակում է եղել մինչև օգոստոսի 10-ը:

21. Մինչ կոմայից դուրս գալը՝ 2001 թվականի հոկտեմբերին և ապա 2002 թվականի դեկտեմբերին դիմողը ենթարկվել է գանգի օստեոմիելիտի ոսկրածուծի բորբոքման դեմ մի շարք օպերատիվ միջամտությունների:

22. 2001 թվականի հոկտեմբերի 1-ին բժշկական խորհուրդը եզրակացրել է, որ դիմողն ունի երկրորդ աստիճանի հաշմանդամություն:

23. 2002 թվականին դիմողն ունեցել է հետտրավմատիկ դողերոցքային ախտանիշներ: 2003 թվականի հունիսի 13-ին նա ունեցել է ուժեղ ցավեր և ուշագնաց է եղել: Նրան տեղափոխել են Բուրդենկոյի հիվանդանոց և վիրահատել՝ գանգում գոյացած թարախային աբսեսի պատճառով:

Բ. Միջնդատական և դատական քննություններ

1. Հարձակման առթիվ կատարված քննությունը (գործ թիվ 073041)

24. 2001 թվականի հունիսի 30-ին և հուլիսի 1-ին Սոկոլինայա Գոռա ոստիկանական բաժանմունքը թիվ 1 և թիվ 33 հիվանդանոցներից հաղորդումներ է ստացել դիմողի և

պարոն Ն.-ի հետ կապված մարմնական վնասվածքների վերաբերյալ: Հետաքննության բաժնի պետը կարգադրել է օպերատիվ աշխատակից պարոն Յերմակովին ստուգել հաղորդումները: Համապատասխան ներքին քննությամբ (տես՝ ստորև) բացահայտվել է, որ պարոն Յերմակովը չի ձեռնարկել որևէ միջոց դեպքի վայրի զննության, վկաների բացահայտման կամ գոհերի հարցաքննության առիթով:

25. 2001 թվականի հուլիսի 6-ին պարոն Յերմակովը նյութերն ուղարկել է քննչական բաժանմունք, որտեղ գործը մակագրվել է օպերատիվ աշխատակից պարոն Աբդրյանին: Պարոն Բդրյանը չի կայացրել նյութերի հետ կապված որևէ դատավարական որոշում մինչև 2001 թվականի հուլիսի 17-ը:

26. 2001 թվականի հուլիսի 18-ին Սոկոլինայա Գոռա ոստիկանական բաժանմունքի պետը կատարել է ներքին քննություն, որով բացահայտվել է, որ որևէ գործողություն չէր կատարվել՝ կապված մարմնական վնասվածքների վերաբերյալ առկա հաղորդումների հետ: Թե պարոն Յերմակովը և թե պարոն Աբդրյանը ենթարկվել են կարգապահական տույժերի: Նույն օրն առաջին անգամ զննվել է դեպքի վայրը: 2001 թվականի հուլիսի 20-ին քրեական գործ է հարուցվել դիմողի և պարոն Ն.-ի առնչությամբ՝ տեղի ունեցած հարձակման առթիվ: 2001 թվականի սեպտեմբերի 20-ին քննիչը՝ պարոն Դրոզդովը, կայացրել է որոշում քննությունը դադարեցնելու վերաբերյալ, քանի որ հնարավոր չի եղել բացահայտելու հարձակում կատարած անձին: Որոշման մեջ նշված միակ ապացույցներն են եղել ոստիկաններ Վոլկովի և Զարովի ու շտապօգնության բժշկի և պարոն Ն.-ի հայտարարությունները:

27. 2001 թվականի հոկտեմբերի 16-ին քննիչ պարոն Սոլովյովը որոշել է վերսկսել քննությունը:

28. 2001 թվականի հոկտեմբերի 29-ի գրությամբ Կենտրոնական դաշնային շրջանի նախագահական պատվիրակության ղեկավարը տեղեկացրել է դիմողի մորը, որ քննության ձգձգման առթիվ նրա բողոքը քննվել է Ներքին գործերի նախարարության ներքին անվտանգության բաժնի կողմից: Հաստատվել է, որ քննությունը չի կատարվել պատշաճ կերպով, որևէ մեկը չի գնացել և չի զննել դեպքի վայրը, և որ չի նախաձեռնվել որևէ այլ միջոց: Օպերատիվ հետախուզության աշխատակիցներ պարոն Յերմակովը և պարոն Աբրամովը ենթարկվել են կարգապահական տույժի:

29. 2001 թվականի նոյեմբերի 16-ին և 2002 թվականի հունվարի 6-ին, ապրիլի 19-ին, հունիսի 13-ին և օգոստոսի 15-ին կայացվել է որոշում քննությունը կարճելու մասին, քանի որ հնարավոր չի եղել բացահայտել հարձակումը կատարած անձին կամ անձանց: Վերահսկողություն իրականացնող դատախազները վերացրել են այդ որոշումները և կարգադրել են քննիչին ձեռնարկել լրացուցիչ քննչական միջոցառումներ, այն է՝ հարցաքննել հարևան շենքի հսկողությունն ապահովող անձանց և Կորոնա սրճարանի գիշերային պահակին և ուսումնասիրել գողացված բջջային հեռախոսից կատարված զանգերի ցանկը:

30. 2003 թվականի սեպտեմբերի 12-ին գործը փոխանցվել է Մոսկվա քաղաքի գլխավոր քննչական վարչությանը:

31. 2004 թվականի փետրվարի 27-ի նամակով Ներքին գործերի նախարարության քննչական հանձնաժողովը ընդունել է, որ թիվ 073041 և 1056 (տես ստորև) գործերի քննությունը չի կատարվել պատշաճ կերպով՝ նշելով հետևյալը.

Մյուս կողմից, հաստատվել է, որ թիվ 73041 գործի քննության նախնական փուլն իրականացվել է ցածր դատավարական մակարդակով և քրեական դատավարության կանոնների խախտմամբ: Շատ անգամ քննությունը ժամանակից շուտ դադարեցվել է այն հիմքով, որ հնարավոր չի եղել հայտնաբերել հանցագործությունը կատարած անձին: Մոսկվա քաղաքի Արևմտյան վարչական շրջանի Սոկոլինայա Գոռա ոստիկանական բաժանմունքի որոշ աշխատակիցներ ենթարկվել են կարգապահական տույժերի քրեական դատավարության կանոնների խախտումների և քննության ոչ պատշաճ իրականացման համար: Թիվ 1056 գործի (բժշկական անփութություն) քննությունը նույնպես թերի է եղել մի շարք խախտումների պատճառով:

Հաշվի առնելով քննության բացթողումները և համաձայն Մոսկվա քաղաքի դատախազության ցուցումների՝ այժմ կատարվում են լրացուցիչ քննչական և օպերատիվ միջոցառումներ վերոնշյալ գործերի առնչությամբ՝ դեպքերը բազմակողմանի և պատշաճ քննության ենթարկելու և հանցանքը կատարողներին բացահայտելու և պատասխանատվության ենթարկելու նպատակով:

32. 2004 թվականի ապրիլի 2-ին և մայիսի 13-ին դատախազը վերացրել է ոստիկանության կայացրած որոշումները՝ կապված քննության դադարեցման հետ և կարգադրել է, որպեսզի կատարվեն հատուկ քննչական գործողություններ:

33. 2004 թվականի հունիսի 4-ին գործը փոխանցվել է Արևմտյան վարչական շրջանի դատախազությանը և մակագրվել է քննիչ պարոն Վոլկին, ով զբաղվում էր հատկապես կարևոր գործերով: 2004 թվականի հուլիսի 20-ին, հունվարի 30-ին ու օգոստոսի 18-ին և 2005 թվականի հոկտեմբերի 5-ին ու 2006 թվականի մարտի 27-ին պարոն Վոլկը դադարեցրել է գործի քննությունն այն հիմքով, որ հնարավոր չի եղել հայտնաբերել հանցագործություն կատարած անձին կամ անձանց:

34. Պարոն Վոլկի վերջին որոշումը՝ կապված քննությունը դադարեցնելու հետ, որը հասու է եղել Դատարանին, կայացվել էր 2006 թվականի հուլիսի 17-ին: Այն ներկայացնում էր գործով հավաքված ապացույցները:

35. Որոշումներում նշվել է, որ ցուցմունքներ են վերցվել երկու տուժողներից, այն է՝ դիմողից և Ն.-ից, որոնք չեն հիշել հարձակվողին, ցուցմունք են տվել նաև նրանց ընկերները, որոնք չեն տեսել հարձակումը, ինչպես նաև ոստիկանության աշխատակիցները, դոնապահները և բժիշկները, որոնք տեսել են տուժողներին հարձակումից հետո: Դատական բժիշկները հաստատել են, որ դիմողն ստացել էր լուրջ մարմնական վնասվածքներ, իսկ Ն.-ն՝ թեթև մարմնական վնասվածքներ:

36. Դիմողի մայրն ասել է քննիչին, որ հանցագործությունից քիչ անց նա գնացել է Սոկոլինայա Գոռա ոստիկանության բաժանմունք: Ոստիկաններից մեկը, որն ուներ զանգուր մազեր և կրում էր Պուշկին մականունը, ասել է իրեն, որ տուժողներին հայտնաբերել են Կորոնա սրճարանի մոտակայքում: Դիմողի մայրը գնացել է սրճարան և զրուցել աշխատողների հետ, որոնք ասել են նրան, որ 2001 թվականի հուլիսի 29-30-ին երեք ոստիկաններ, որոնց անվանել են Մաշա, Միդոր և Կոստյա, հարբել էին սրճարանում և ագրեսիա էին դրսևորում՝ առիթ որոնելով բարմենի հետ կռվելու: Մյուս հանդերձ, նրանք չեն տեսել որևէ կոիվ ոստիկանների և նրա որդու կամ պարոն Ն.-ի միջև: Քննիչը ցուցմունք է վերցրել նաև Սոկոլինայա Գոռա ոստիկանական բաժանմունքի յոթ աշխատակիցներից, որոնք հայտարարել են, որ չեն կարողանում

հիշել իրենց այցելությունը սրճարան հենց այդ գիշեր և չեն ճանաչել Սիդոր՝ կամ Պուշկին՝ մականունով որևէ մեկի: Նրանցից երեքը հերքել են, որ իրենք երբևէ եղել են Կորոնա սրճարանում, իսկ մյուս չորսը հաստատել են, որ ժամանակ առ ժամանակ գնացել են այդ սրճարան:

37. Պարոն Ն.-ի մայրն ասել է քննիչին, որ հիվանդանոցում իր կիսագիտակից որդին անկապակցված շնչացել է ոստիկանների մասին, որոնք հարվածել են իր գլխին: Երբ երկու օր անց նա եկել է այցելության, տեսել է իր որդու մահճակալի կողքին քաղաքացիական հագուստով երկու տղամարդու, որոնցից մեկը ցնցում էր իր որդուն՝ հարցնելով նրան, թե արդյոք նա հիշում է իրեն ծեծած ոստիկաններին: Նա միջամտել է, և նրանք դուրս են եկել միջանցք, ուր տղամարդիկ ցույց են տվել իրենց անվանանշանները՝ ներկայանալով որպես Սոկոլինայա Գոռա ոստիկանական բաժանմունքի ոստիկաններ պարոն Դրոզին և պարոն Կոնովալենկո: Իրար նրանք անվանում էին Պուշկին և Դիմոն: Նրանք ասել են հիվանդի մորը, որ իրենք էին քննում իր որդու վրա կատարված հարձակման դեպքը: Քննիչը հարցաքննել է պարոն Դրոզինին, որը հերքել է, որ ինքը երբևէ այցելել է պարոն Ն.-ին հիվանդանոցում: Պարոն Կոնովալենկոյին հարցաքննել չի հաջողվել:

38. Քննիչը գտել է, որ հնարավոր չի եղել պարզել, թե ովքեր են եղել պատասխանատու հարձակման համար: 2006 թվականի նոյեմբերի 30-ին վերահսկողություն իրականացնող դատախազը վերացրել է այդ որոշումը և կարգադրել է պարոն Վոլկին պարզաբանել խաչաձև հարցաքննության մեջ առկա հակասությունները և հայտնաբերել ու քննել Սոկոլինայա Գոռա ոստիկանական բաժանմունքի նախկին ոստիկաններին:

2. Ոստիկաններ Զարովի և Վոլկովի գործողությունների առթիվ կատարված քննությունը (գործ թիվ 229337)

39. 2002 թվականի հունվարի 6-ին, այն բանից հետո, երբ դիմողի մայրը բողոքել է պարոն Զարովի և պարոն Վոլկովի, ինչպես նաև բժիշկ Կ.-ի կողմից իրենց պարտականությունների ոչ պատշաճ կատարման առթիվ, որը դիմողի նկատմամբ չի ցուցաբերել անհրաժեշտ բուժօգնություն, որոշ նյութեր առանձնացվել են հիմնական քրեական գործից առանձին քննելու համար:

40. 2002 թվականի մարտի 13-ին Իզմայլովսկի շրջանային դատախազության քննիչը պարոն Ն.-ի, դիմողի մոր, բժիշկ Պ.-ի, Չ.-ի և Կ.-ի, ինչպես նաև ոստիկաններ Զարովի և Վոլկովի ցուցմունքների հիման վրա որոշել է, որ չի եղել քրեական հանցագործության որևէ հանցակազմ, քանի որ բժիշկ Կ.-ն ճշգրտորեն ախտորոշել է դիմողին, ձեռնարկել է բոլոր պահանջվող միջոցները, և որովհետև ոստիկանները թյուրիմացաբար կարծել են, որ պարոն Վասիլևը և պարոն Ն.-ն կարող էին ինքնուրույն հոգ տանել իրենց մասին:

41. 2002 թվականի մարտի 15-ին վերահսկող դատախազը վերացրել է այդ որոշումը: Նա գտել է, որ ոստիկանության աշխատակիցների թյուր կարծիքը, որը հանգեցրել է սխալ հետևությունների, հակասել է գործի փաստերին, քանի որ դիմողը եղել է անգիտակից վիճակում, երբ նրանք ժամանել են դեպքի վայր: Նա որոշել է կայացրել քննություն սկսել Քրեական օրենսգրքի 293-րդ հոդվածի 2-րդ կետի հիմքով (հանցավոր անփութություն, որը հանգեցրել է տուժողի մահվան կամ ծանր վնասվածքի): Քննությունը հանձնարարվել է Իզմայլովսկի շրջանային դատախազին:

42. 2002 թվականի հունիսի 15-ին և հուլիսի 26-ին քննությունը դադարեցվել է քրեական հանցագործության հանցակազմի բացակայության հիմքով: Այդ որոշումները վերացվել են վերադաս դատախազների կողմից:

43. Չճշտված օրը ոստիկաններ Ջարովը և Վոլկովը պաշտոնապես մեղադրվել են դիմողին և Ն.-ին վտանգի մեջ թողնելու համար, ինչը հանցագործություն էր Քրեական օրենսգրքի 125-րդ հոդվածի հիմքով:

44. 2002 թվականի սեպտեմբերի 5-ին դիմողն ստացել է տուժողի կարգավիճակ քննության շրջանակներում:

45. 2002 թվականի նոյեմբերի 27-ին դիմողը խնդրել է քննիչին շտկել ոստիկանների գործողությունների իրավաբանական բնորոշումը: Նա նշել է, որ ոստիկաններն իրենց պարտականությունները կատարելիս են եղել և գործել են ի խախտումն Ոստիկանության մասին օրենքի պահանջների: Այդ պատճառով նրանք պետք է մեղադրվեն հանցավոր անփութության համար, որը հանգեցրել է ծանր հետևանքների, ինչը հանցագործություն է Քրեական օրենսգրքի 293-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով: Նույն օրը դիմողը խնդրել է քննիչին ճանաչելու իրեն որպես քաղաքացիական կողմ: Նրա հայտարարությունը հաստատվել էր քննիչի կողմից տրված գրավոր ստացականով, որում նշված էր 2002 թվականի նոյեմբերի 28-ը: Պարզ չէ, թե ինչ է պատասխանել քննիչը դիմողի միջնորդության վերաբերյալ:

46. 2002 թվականի նոյեմբերի 29-ին պարոն Վոլկովի և պարոն Ջարովի նկատմամբ կազմվել է մեղադրական եզրակացություն: Քրեական օրենսգրքի 125-րդ հոդվածի հիմքով քրեական հետապնդումն այն էր, որ նրանք եղել են հսկիչ հերթապահ ոստիկանները, որոնք ժամանել են դեպքի վայր և հայտնաբերել անգիտակից երկու տղամարդկանց: Իմանալով, որ տղամարդիկ անօգնական են և չեն կարող անձամբ հոգ տանել իրենց մասին, Վոլկովը և Ջարովը չեն իրականացրել իրենց՝ օրենքով սահմանված պարտականությունը՝ Ոստիկանության մասին օրենքի, Ոստիկանական պարեկության մասին կանոնների և ներքին կանոնների հիմքով, որոնց համաձայն նրանք պարտավոր էին պաշտպանել հանցագործությունների կամ պատահարների զոհերին, թունավորված անձանց, որոնք ի վիճակի չեն շարժվել, ինչպես նաև այլ խոցելի անձանց: Չնայած նրանք ունեցել են օգնություն ցույց տալու իրական հնարավորություն, սակայն չեն ստուգել և պարզել, թե ովքեր են զոհերը, շտապօգնություն չեն կանչել, չեն ցուցաբերել առաջին օգնություն, նրանց չեն տարել հիվանդանոց, չեն պարզել վկաներին, ինչպես նաև չեն ապահովել դեպքի վայրի պահպանությունը: Փոխարենը նրանք մի կողմ են տարել տուժողներին և ոչ ճիշտ տեղեկություն են հաղորդել Սոկոլինայա Գոռա ոստիկանական բաժանմունքի ոստիկանին այն մասին, ուր ձեռնարկվել են բոլոր անհրաժեշտ միջոցները:

47. 2003 թվականի հունվարի 24-ին Մոսկվա քաղաքի Իզմայլովոյի շրջանային դատարանը դատական նիստ է նշանակել 2003 թվականի փետրվարի 7-ին: Դատավորը տեղեկացրել է դիմողին, որ նրա՝ որպես քաղաքացիական կողմի միջնորդությունը ներգրավվելու է քննության առնվող նյութերում, կհետազոտվի և քննության կառնվի հետագա նիստերի ընթացքում:

48. Նիստերը տեղի են ունեցել 2003 թվականի փետրվարի 20-ին, մարտի 25-ին, ապրիլի 30-ին, հունիսի 23-ին, հուլիսի 28-ին և սեպտեմբերի 24-ին:

49. Դատարանը հարցաքննել է հարևան շենքի դռնապահներ պարոն Ե.-ին և պարոն Բ.-ին, շտապօգնության բժիշկներ Պ.-ին և Չ.-ին, որոնք նկարագրել են այն հանգամանքները, որոնցում հայտնաբերել են դիմողին և պարոն Ն.-ին: Ավագ օպերլիազոր պարոն Կ.-ն, ով հերթապահել է Սոկոլինայա Գոռա ոստիկանական բաժանմունքում 2001 թվականի հունիսի 29-30 գիշերը, հայտնել է, որ չի եղել որևէ հայտարարություն Շերբակովսկայա փողոցում երկու երիտասարդ տղամարդկանց վերաբերյալ: Այդուհանդերձ, նրան մեկ ժամով փոխարինել էր պարոն Վանչարինը: Նա նույնպես ցուցմունք է տվել այն մասին, որ արտագերատեսչական պաշտպանության բաժնի աշխատակիցները նախապատվություն պետք է տային պաշտպանությունը համակարգողի և ոչ թե ոստիկանության բաժանմունքի հերթապահ աշխատակցի կարգադրություններին:

50. Ոստիկան պարոն Վանչարինը հաստատել է, որ իրեն հեռախոսազանգով տեղեկացրել են երիտասարդ տղամարդկանց առնչությամբ, սակայն չի հաղորդել այն, քանի որ դրված չի եղել շտապ ահազանգերի շարքում: Նա ռադիոկապ է հաստատել արտագերատեսչական պաշտպանության բաժնի պարեկային ոստիկանների հետ և կարգադրել նրանց ստուգել տեղեկությունը: Նրանք պատասխանել են, որ հայտնաբերել են երկու հարբած տղամարդու, և որ իրավիճակը հսկողության տակ է եղել: Ի պատասխան՝ նա կարգադրել է նրանց շարունակել պարեկությունը: Պաշտպանությունը համակարգողը (կոորդինացողը) հայտնել է դատարանին այն մասին, որ 1.44-ին նա ահազանգ է ստացել և այն ստուգելու համար ուղարկել է ոստիկաններ Վոլկովին և Զարովին:

51. 2003 թվականի սեպտեմբերի 29-ին Շրջանային դատարանն արդարացրել է ոստիկաններին՝ տալով ապացույցներին հետևյալ գնահատականը.

‘... Դատարանը գտնում է, որ ցույց չի տրվել, որ ամբաստանյալներ Վոլկովը և Զարովը գործել են՝ իմանալով այն փաստը, որ դիմողը և նրա ընկերը եղել են այնպիսի վիճակում, որը վտանգավոր է եղել նրանց կյանքի ու առողջության համար, և քանի որ նրանք դա չեն իմացել, որովհետև ընդամենը մի քանի րոպե են անցկացրել դեպքի վայրում գիշերվա այդ ժամին և քանի որևէ վնասվածք չի նկատվել: Նրանք որոշել են, որ դիմողը և նրա ընկերը եղել են ակոհոլային կամ թմրամիջոցային թունավորման վիճակում:

Ի հիմնավորումն այն հայտարարության, թե պարոն Վոլկովը և պարոն Զարովը ոչ ճիշտ հաղորդում են տրամադրել հերթապահ ոստիկանին՝ դատախազը հղում է կատարել միայն պարոն Վանչարինի՝ որպես վկայի ցուցմունքին, որը ոստիկան էր, սակայն որը որևէ հաղորդումներ ստանալու իրավասություն չունի: Այդուհանդերձ, նա փոխարինել էր հերթապահ ոստիկանին՝ ի խախտումն Սոկոլինայա Գոռա ոստիկանական բաժանմունքի կանոնների...

Ստանալով նման տեղեկատվություն՝ հերթապահ ոստիկանը պարտավոր է այն գրանցել գրանցամատյանում, ստուգել այն և գրանցել ստուգման արդյունքները: Դատարանը գտել է, որ հերթապահ ոստիկանը, ստանալով տեղեկատվություն Վոլկովից և Զարովից այն մասին, որ իրավիճակը եղել է հսկողության տակ, պարտավոր էր ստուգել այն և ստանալ հավաստի տեղեկատվություն իրավիճակի մասին: Պարոն Վանչարինը, սակայն, չի արել այդ և այդ տեղեկատվությունը կամ դրա ստուգման

արդյունքները չի փոխանցել իրական հերթապահին ... Դատարանն այդ իսկ պատճառով վստահացուցիչ է համարում պարոն Վոլկովի և պարոն Զարովի ցուցմունքներին ... քանի որ այդ հանգամանքներում պարոն Վանչերինը չունեի որևէ շահ ճշմարտությունն ասելու հարցում:

52. 2004 թվականի փետրվարի 17-ին Մոսկվա քաղաքի դատարանն անփոփոխ է թողել բողոքարկման արդյունքում կայացված վճիռը՝ հակիրճ պատճառաբանությամբ:

2. Բժշկական անփութության կապակցությամբ իրականացված քննությունը (գործ թիվ 1056)

53. 2001 թվականի օգոստոսի 14-ին շտապօգնության բաժանմունքի գլխավոր բուժառայողը տեղեկացրել է դիմողի մորը, որ ներքին քննությամբ հաստատվել է, որ շտապօգնության բժիշկն ախտորոշել է դիմողին նրա ընկերոջ հայտարարությունների հիման վրա: Արդյունքում՝ նա թերագնահատել է նրա դրության ծանրությունը: Բժիշկը ենթարկվել է լուրջ կարգապահական տույժի:

54. 2001 թվականի նոյեմբերի 8-ին և 2002 թվականի օգոստոսի 2-ին տարբեր աստիճանների դատախազները տեղեկացրել են դիմողի մորն այն մասին, որ թիվ 33 հիվանդանոցի բժիշկները չեն կատարել քրեորեն հետապնդելի հանցագործություն, և մերժել են քրեական գործի հարուցումը:

55. 2002 թվականի հունվարի 4-ի նամակով Մոսկվայի առողջության պահպանման հանձնաժողովի ղեկավարը հաստատել է, որ թիվ 33 հիվանդանոցում բժշկական օգնության ուսումնասիրությամբ չի բացահայտվել որևէ թերություններ:

56. Դիմողի մոր կողմից 2003 թվականի մարտի 5-ին ներկայացված բողոքից հետո Մոսկվա քաղաքի դատախազի առաջին տեղակալը վերացրել է 2002 թվականի օգոստոսի 2-ի որոշումը, որով քրեական գործի հարուցումը մերժվել է, և կարգադրել է Պրեդբրաժենսկի շրջանային դատախազին հարուցել քրեական գործ՝ Քրեական օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով (հիվանդին բուժօգնություն ցույց չտալը, որը նրա առողջությանը ծանր վնաս է հասցրել):

57. 2003 թվականի հունիսի 15-ին նախաձեռնվել է բարդ բժշկական հետազոտություն պարզելու համար, թե արդյոք դիմողի առողջությունը կարող էր թիվ 33 հիվանդանոցում վնասվել ուշացած և ոչ պատշաճ բուժօգնության պատճառով:

58. 2003 թվականի հուլիսի 7-ին Պաշտպանության նախարարության 11-րդ դատաբժշկական կենտրոնն սկսել է իր աշխատանքը:

59. 2003 թվականի սեպտեմբերի 4-ին քննիչ պարոն Կիրիչևսկին դադարեցրել է քննությունը, քանի որ հնարավոր չի եղել հայտնաբերել հանցանքը կատարած անձին:

60. 2003 թվականի դեկտեմբերի 1-ին փորձագետների խումբը ներկայացրել է իր եզրակացությունները՝ հիմնված դիմողի՝ թիվ 33 հիվանդանոցից ստացված բժշկական տվյալների վրա (թիվ 23304), քրեական գործի նյութերը և համապատասխան բժիշկների կողմից ստացված տեղեկատվությունը: Փորձագետները գտել են, հատկապես, որ թիվ 66 հիվանդանոցում հայտնվելուց հետո դիմողի վնասվածքների ոչ լրիվ և հակասական բնութագրումը թույլ չի թվել պարզելու վնասվածքների կոնկրետ աղբյուրը, ժամանակը և պատճառները: Կարող էր միայն հաստատվել այն, որ նրա գլխին էին հարվածել ծանր բույժ առարկայով: Ավելին, Բուրդենկո հիվանդանոցում կատարված համապատասխան

հետազոտությամբ բացահայտվել էր կրծքավանդակի շրջանում երկու կոտրված ողներ, որոնք չէին նկատվել թիվ 33 հիվանդանոցում, որտեղ նշանակվել էր ճառագայթային հետազոտություն, ինչն այդպես էլ չէր կատարվել:

61. Փորձագետները պարզել են, որ հաշվի առնելով այն բարդ կացությունը, որում դիմողը հայտնվել էր, նա պետք է անմիջապես հետազոտված լիներ նյարդավիրաբույժի և այլ մասնագետների կողմից՝ քրանիոսերերալ՝ վնասվածքների և թունավորմանը բնորոշ ախտորոշման, ինչպես նաև հրատապ բուժման առթիվ համապատասխան որոշումներ կայացնելու համար: Այդուհանդերձ, նյարդավիրաբույժը դիմողին հետազոտել է նրան բերելուց հետո ավելի քան երկու ժամ անց, իսկ հետագա երեսուներկու ժամվա ընթացքում նրան չի զննել որևէ մասնագետ, և որևէ բժշկական հետազոտում, անգամ արյան և մեզի, չի կատարվել: Չի չափվել նույնիսկ դիմողի ջերմությունը: Փորձագետները նշել են հետևյալը.

‘Ժամանման պահից (2001 թվականի հունիսի 30-ին, ժամը 9.05) և մինչև վիրահատության պատրաստվելը (2001 թվականի հուլիսի 1-ին, ժամը 17.30) դիմողը պատշաճ կերպով և օբյեկտիվորեն չի հետազոտվել, չի իրականացվել իրական կլինիկական ախտորոշում ... չի նշանակվել պատշաճ բժշկական բուժում ... Դիմողի ձգձգված պասիվ հետազոտումը, որը չի ուղեկցվել կլինիկական հետազոտությամբ, հանգեցրել է նրա վիճակի խիստ վատթարացմանը, և որպես հետևանք՝ ուշացված վիրաբուժական միջամտության, որը հիմնված չի եղել կլինիկական կամ լաբորատոր հետազոտությունների վրա, ինչը հանգեցրել է ակնհայտ բացասական հետտրավմատիկ և հետվիրաբուժական բարդությունների...’

Հետվիրաբուժական ընթացքում ցուցված է եղել հակամանրէական բուժում, սակայն այն իրականացվել է ոչ հետևողականորեն և առանց պատշաճ վերահսկման, որը հանգեցրել է վերքերի, սարդոստայնային թաղանթի և ուղեղանյութի թարախային բորբոքմանը, աջ ականջոսկրի բորբոքմանը և այլն ...’

62. Փորձագետները նաև նկատել են, որ առկա չի եղել որևէ օբյեկտիվ հիմք դիմողին ալկոհոլային թունավորմամբ ախտորոշելու համար: Ոչ շտապօգնության բժիշկն իր նշումներում, ոչ նրա գործընկերները համապատասխան այցելությունների ժամանակ բժշկական գրառումներում չեն նշել ալկոհոլային թունավորման մասին: Ալկոհոլի առկայության մասին վկայակոչումն առաջին անգամ եղել է 2001 թվականի հունիսի 30-ի բժշկական հետազոտության մասամբ ոչ հստակ և ոչ լիարժեք եզրակացության մեջ: Այդուհանդերձ, հետազոտությունը կատարվել է կիրառելի կանոնների խախտմամբ: Չի նշանակվել որևէ բուժում թունավորման դեմ, և թունավորման ախտորոշումը չի նշմարվել որևէ այլ փաստաթղթում: Թունավորման ախտորոշման հնարավորությունը հետագայում հերքվել է այն փաստով, որ դիմողի արյան մեջ իբրև թե հայտնաբերված ալկոհոլի չափաբաժինը կարող էր լինել մահացու:

63. Փորձագետները կազմել են հետևյալ եզրակացությունը.

‘Դիմողի՝ առանց պատշաճ բժշկական օգնություն ստանալու բժշկական հաստատությունում երկարատև մնալու արդյունքում պատճառված վնասների առկայությունը չի կարող լիովին հաստատված համարվել: Կարելի է միայն հաստատել, որ նրա վիճակը լրջորեն վատթարացել է այդ ընթացքում, և որ անդառնալի ուղեղային

փոփոխությունները շարունակվել են այն աստիճանի, որ ցուցված է եղել շտապ վիրահատություն կյանքը փրկելու նկատառումներով...

Տվյալ հետազոտությունը բացահայտել է մի շարք թերություններ թիվ 33 հիվանդանոցում իրականացված բժշկական օգնության առթիվ – հատկապես, կատարվել են չարդարացված կոնսերվատիվ բուժում, ոչ լիարժեք հետազոտություն և ուշացված ու ոչ լիարժեք ախտորոշում, վիրաբուժական միջամտություն, ոչ պատշաճ բժշկական միջոցառումներ, որոնք չեն կանխել խիստ հետտորավմատիկ պրոցեսների զարգացումը և հանգեցրել են ոչ ցանկալի արդյունքի և դիմողի հաշմանդամության: Այդուհանդերձ, հնարավոր չէ հաստատել, թե այդ թերությունները ինչ չափով են ազդել արդյունքի վրա, քանի որ առկա չեն պատշաճ միջոցառումներ:

64. 2003 թվականին հայտնաբերվել է, որ դիմողին վերաբերող՝ թիվ 33 հիվանդանոցում կատարված բժշկական գրառումներն ինչ-ինչ պատճառով անհայտացել են: Դրանք հիվանդանոցից վերցրել էր պարոն Սոլովյինը 2001 թվականին, և ներկայացրել էր փորձագետներին հետազոտելու նպատակով: Դրանք այնուհետև վերադարձվել էին քննիչներին, որոնք այլևս չեն իմացել դրանց գտնվելու տեղը:

65. 2004 թվականի հունվարի 12-ին Մոսկվա քաղաքի դատախազի տեղակալը վերացրել է քննությունը դադարեցնելու վերաբերյալ որոշումը և պահանջել է, որպեսզի ձգձգումների և դատավարական խախտումների համար պատասխանատուները ենթարկվեն կարգապահական տույժերի: 2004 թվականի փետրվարի 17-ին ներքին քննությամբ հաստատվել է, որ քննիչ պարոն Կիրիևսկին ապօրինաբար որոշել է դադարեցնել քննությունը՝ մինչև բժշկական հետազոտության ավարտելը: Քննիչն ստացել է նկատողություն, իսկ նրա վերադասի պաշտոնն իջեցվել է:

66. 2004 թվականի փետրվարի 3-ին Արևմտյան վարչական շրջանային ոստիկանության քննիչ պարոն Շախովը վերցրել է գործը: Նա տեղեկացրել է դիմողի մորը, որ բժշկական նյութերի կորստի համար պատասխանատուները ենթարկվել են կարգապահական տույժերի:

67. 2004 թվականի ապրիլի 20-ին քննիչ պարոն Շախովը կազմակերպել է նոր բժշկական հետազոտություն՝ նույն փորձագետների կողմից և նույն հարցադրումներով: Նախորդ հետազոտությունը ճանաչվել է անընդունելի, քանի որ այն կատարվել էր այն ժամանակ, երբ քննությունն արդեն դադարեցվել էր: 2004 թվականի մայիսի 17-ին նոր հետազոտությունն ավարտվել է: Փորձագետները տվել են նույն եզրակացությունները: Նրանք նաև նշել են, որ նրանց խնդիրը բարդացել էր մի շարք շտկումների պատճառով, հատկապես՝ օրերի և ժամանակի առումով, որոնք նշվել էին թիվ 33 հիվանդանոցի բժշկական նյութերում, և որովհետև առկա են եղել անբացատրելի հակասություններ:

68. 2004 թվականի մայիսի 20-ին քննիչ պարոն Շախովը կայացրել է քննությունը դադարեցնելու մասին որոշում՝ այն հիմքով, որ քննության համար սահմանված ժամկետն ավարտվել էր: 2004 թվականի հունիսի 19-ին որոշումը վերացվել է վերահսկող դատախազի կողմից:

69. Քննությունը փոխանցվել է պարոն Բուվինին, որը որոշումներով դադարեցրել է քննությունը նույն հիմքով՝ 2004 թվականի սեպտեմբերի 1-ին և նոյեմբերի 19-ին: Դատախազը վերացրել է նրա որոշումները 2004 թվականի հոկտեմբերի 13-ին և դեկտեմբերի 18-ին:

70. 2005 թվականի հունվարի 18-ին քննիչը նշել է, որ նախնական դատաբժշկական փորձաքննությունը չի պարզել թիվ 33 հիվանդանոցում դիմողին տրամադրված բժշկական օգնության թերությունների և նրա առողջությանը պատճառված վնասի միջև կապի աստիճանը: Նա հանձնարարել է նոր բժշկական հետազոտություն Մոսկվայի կառավարության առողջության պահպանության վարչության փորձագետներին և կարճել է գործի քննությունը:

71. 2005 թվականի մայիսի 30-ին փորձագետները ներկայացրել են իրենց եզրակացությունները, որոնք բժշկական նյութերի բնօրինակների բացակայության պատճառով հիմնված են եղել գործի նյութերի և նախնական փորձագիտական հետազոտության բնօրինակ նյութերից երկար մեջբերումների վրա: Փորձագետները պարզել են, որ դիմողը տառապել է վասկուլյար պաթոլոգիայով, որը հանգեցրել է գլխի հետին հատվածի տրավմայի, սաբդուրալ հեմատոմայի և ալկոհոլային թունավորման: Նրանց կարծիքով թիվ 33 հիվանդանոց տանելու պահին դիմողը չի ունեցել հրատապ վիրահատության կարիք: Հեմատոման կարող էր մեծանալ որոշ ժամանակ բժիշկների մշտական հսկողության ներքո, որոնք կապասեին գլխուղեղի վիրահատության համար ամենահարմար պահին: Փորձագետները եզրակացրել են, որ նախնական արդյունքում արված եզրակացությունները օբյեկտիվորեն ոչ պիտանի են, և որ ախտորոշումը և վիրահատությունը կատարվել են ոչ ճիշտ ժամանակին և ոչ ճիշտ ձևով: Նույն օրը դատախազը կարգադրել է վերսկսել քննությունը:

72. 2005 թվականի հունվարի 18-ին (վերացված մայիսի 30-ին) և 2005 թվականի մայիսի 31-ին (վերացված հունիսի 24-ին) մի շարք դատավարական հիմքերով կայացվել են քննությունը դադարեցնելու վերաբերյալ որոշումներ:

73. 2005 թվականի օգոստոսի 15-ին քննիչը որոշում է կայացրել նշանակելու մեկ այլ դատաբժշկական փորձաքննություն՝ առաջին և երկրորդ փորձագիտական եզրակացությունների միջև առկա հակասությունները վերացնելու նպատակով: Այն հանձնարարվել է Առողջության պահպանման և Սոցիալական բարեփոխման դաշնային գործակալության դատաբժշկական փորձաքննության կենտրոնին: Սակայն Կենտրոնը հրաժարվել է կատարել փորձաքննություն բժշկական նյութերի բնօրինակների բացակայության պատճառով: Կենտրոնի առաջին բաժնի տնօրենը հայտնել է քննիչին, որ գործի նյութերի և այլ փորձագետների եզրակացությունների հիման վրա փորձաքննությունը կարող է լինել մեթոդաբանորեն սխալ և փորձագիտական քննությունների առկա պրակտիկայի խախտմամբ:

74. 2005 թվականի սեպտեմբերի 6-ին քննիչը դիմողին ներգրավել է գործի քննությանը որպես տուժող, իսկ նրա մորը՝ որպես նրա իրավաբանական ներկայացուցիչ:

75. 2006 թվականի ապրիլի 28-ին և հուլիսի 19-ին քննիչ պարոն Վուկը որոշել է դադարեցնել քննությունն այն հիմքով, որ տեղի չի ունեցել որևէ հանցագործություն: Որոշումները վերացվել են վերահսկող դատախազների կողմից:

76. Քրեական գործի քննությունը դադարեցնելու վերաբերյալ վերջին որոշումը, որը ներկայացվել է Դատարանին, կայացվել է 2006 թվականի նոյեմբերի 29-ին: Այն հիմնվել էր առկա ապացույցների, ինչպես նաև թիվ 33 հիվանդանոցից պարոն Կ.-ի, պարոն Յ.-ի և պարոն Բ.-ի, շտապ օգնության բժիշկների, դիմողի ընկեր պարոն Ն.-ի, դիմողի մոր և իր՝ դիմողի ցուցմունքների վրա: Մեծամասամբ մեջբերվել են առաջին և երկրորդ

դատաբժշկական հետազոտությունների արդյունքում եզրակացությունները, քանի որ առկա էր փաստաթղթերի բնօրինակների բացակայության պայմաններում՝ համաձայնեցնող՝ փորձաքննություն կատարելու վերաբերյալ դաշնային դատաբժշկական փորձաքննության կենտրոնի մերժումը: Քննիչը հանգել է հետևյալ եզրակացության:

Բացի երկու փորձագիտական հանձնաժողովների վերը նշված եզրակացությունների միջև առկա էական հակասություններից՝ կապված դիմողի հիվանդության առաջացման պատճառների և նրա նկատմամբ իրականացված բուժման մասնագիտական աստիճանից, հանձնաժողովներից ոչ մեկը չի կարողացել եզրակացնել, որ առկա է եղել պատճառական կապ դիմողի նկատմամբ իրականացված բուժման և տուժողի առողջությանը լուրջ վնաս հասցնելու ձևով հետևանքների միջև:

Այս հանգամանքներում քննությունը գտնում է, որ չկան օբյեկտիվորեն համեմատելի փաստական ցուցումներ առ այն, որ թիվ 33 հիվանդանոցից բժիշկներ Կ.-ն, Ց.-ն և Բ.-ն դիմողին՝ առանց հիմնավոր պատճառների, չեն ցույց տվել բժշկական օգնություն՝ այդպիսով պատճառելով նրա առողջությանը լուրջ վնասներ, այսինքն, նրանք կատարել են հանցագործություն Քրեական օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով:

77. Նույն օրը վերահսկող դատախազը վերացրել է այդ որոշումը և կարգադրել է պարոն Վոլկին վերացնել քննության թերությունները և հատկապես, հայտնաբերել բժշկական փաստաթղթերի բնօրինակները:

II. Համապատասխան ներպետական օրենսդրություն

A. Քրեական օրենսգիրք

78. Քրեական օրենսգրքի 124-րդ հոդվածը բնորոշում է հիվանդի նկատմամբ բուժօգնություն չապահովելու հանցագործությունը՝ որպես այն անձի կողմից, առանց հիմնավոր պատճառի, բժշկական օգնություն ցույց չտալ, որն ունի օրենքով սահմանված նման օգնություն ցույց տալու պարտականություն: Հոդվածի 2-րդ մասը վերաբերում է այն իրավիճակին, երբ նման բացթողումը հանգեցնում է տուժողի մահվան կամ նրա առողջությանը լուրջ վնասի պատճառմանը:

79. Հոդված 125-ն առնչվում է կյանքի համար վտանգավոր իրավիճակում անձին լքելու հանցագործությանը, որը բնորոշվում է որպես կյանքի կամ առողջության համար վտանգավոր դրության մեջ հայտնված անձին լքելու դիտավորյալ գործողություն, ով ի վիճակի չէ ինքնուրույն հոգ տանել իր մասին՝ անկախ երիտասարդ կամ մեծահասակ տարիքից, հիվանդության կամ անօգնական վիճակում գտնվելու պատճառով, երբ հանցագործը հնարավորություն է ունեցել օգնել այդ անձին, ինչպես նաև պարտավոր է եղել հոգ տանել նրա մասին:

80. Հոդված 293-ը բնորոշում է մասնագիտական անփութության հանցագործությունը որպես մասնագիտական պարտականությունների չկատարում կամ ոչ պատշաճ կատարում, ինչը հանգեցրել է քաղաքացիների իրավունքների և օրինական շահերի հիմնավոր խախտումների:

B. Ոստիկանության մասին օրենք (1991 թվականի ապրիլի 18-ի օրենք թիվ 1026-Ն)

81. 10-րդ մասը նախատեսում է, որ ոստիկանությունը մասնավորապես պարտավոր է օգնություն ցուցաբերել քրեական և վարչական հանցագործությունների և

պատահարների զոհերին, ինչպես նաև անօգնական վիճակում կամ կյանքի կամ առողջության համար վտանգավոր վիճակում հայտնված անձանց:

C. Պարեկային ոստիկանության վերաբերյալ կանոնակարգ (Ներքին գործերի նախարարության՝ 1993 թվականի հունվարի 18-ի թիվ 17)

82. Հանցանքի վայր ժամանելով՝ ճանապարհային ոստիկանությունը պետք է օգնություն ցույց տա տուժողներին, անհրաժեշտության դեպքում կանչի շտապօգնություն, բացահայտի հանցագործության հնարավոր վկաներին և ականատեսներին, ապահովի դեպքի վայրի պահպանությունը, այդ մասին հաղորդի հերթապահ ոստիկանին և ղեկավարվի նրա կարգադրություններով (135-րդ մաս):

83. Առաջին օգնություն ցուցաբերելիս կամ տուժողին բուժհաստատություն տանելիս ոստիկանը պետք է զննի տուժողի հագուստը, մարմնի բաց մասերը՝ մասնավորապես նրա ինքնությունը պարզելու: Եթե տուժողը չի ցուցաբերում կենդանության նշաններ, ոստիկանը պետք է, նախևառաջ, համոզվի՝ արդյոք նա ողջ է, թե՛ ոչ, առանց նրա և շրջապատող առարկաների դիրքը փոխելու (մաս 141):

D. Ոստիկանությանը կից մասնավոր պաշտպանության բաժնին վերաբերյալ կանոններ (Կառավարության՝ 1992 թվականի օգոստոսի 14-ի թիվ 589 կանոնը)

84. Ոստիկանությանը կից առևտրային պաշտպանության բաժիններն ստեղծվել են մասնավոր սեփականությունը պահպանելու (մաս 1) նպատակով: Մասնավոր պաշտպանության ուժերը ներառում են ոստիկանության աշխատակիցներ, ինչպես նաև տեխնիկական և օժանդակ աշխատակազմ (մաս 4): Մասնավոր պաշտպանության բաժնի ոստիկանները հավաքագրվում են Ներքին գործերի նախարարության կողմից (մաս 9), և նրանք ունեն Ոստիկանության մասին օրենքով ոստիկանության աշխատակիցների համար սահմանված բոլոր իրավունքները, ներառյալ՝ զենք կրելու և հանցագործներին ձերբակալելու իրավունքը (մաս 8):

E. Քրեական դատավարության օրենսգիրք

85. Մինչև 2003 թվականի հուլիսի 10-ը Քրեական դատավարության օրենսգիրքը նախատեսում էր, որ քաղաքացիական հայցը կարող է ներկայացվել քրեական գործը հարուցվելուց հետո, սակայն մինչև մինչդատական քննության ավարտը (հոդված 44-ի 2-րդ մաս): 2003 թվականի հունիսի 4-ին թիվ 92-FZ Դաշնային օրենքում կատարված փոփոխություններից հետո քաղաքացիական հայց ներկայացնելու ժամկետը երկարաձգվել է մինչև առաջին ատյանի դատարանում եզրափակիչ առարկությունների սկիզբը:

Օրենք

I. Դիմողի վրա հարձակվելու առնչությամբ քննության վիճահարույց անարդյունավետությունը

86. Դիմողը գանգատ է ներկայացրել Կոնվենցիայի 2-րդ հոդվածի հիմքով՝ առ այն, որ Պետությունը չի տրամադրել համապատասխան մեխանիզմ հասարակական

անվտանգությունն ապահովելու և կյանքի ու առողջության նկատմամբ ոտնձգության քննության համար:

87. Դիմումի ընդունելիության և հանգամանքների առնչությամբ իր դիտարկումներում դիմողն ընդգծել է, որ իր գանգատն այն մասին չէ, թե իր վրա հարձակվել են պետական ծառայողները, կամ որ հարձակման համար որևէ այլ կերպ պատասխանատու է Պետությունը: Ավելի շուտ նա նշել է, որ Պետությունը չի կատարել կյանքի համար վտանգավոր հարձակմանն առնչվող հանգամանքների արդյունավետ քննություն իրականացնելու, հանցագործին հայտնաբերելու և կրած վնասները փոխհատուցելու իր պարտականությունը: Այս առթիվ նա նշել է, որ քննությունը չի իրականացվել պատշաճ կերպով, քանի որ գործը բաց է եղել դեպքից հետո 21 օրվա ընթացքում, որ այն փակվել և բացվել է առնվազն ութ անգամ, որ ոստիկանության աշխատակիցների՝ հանցագործության մեջ ներգրավված լինելու վերաբերյալ իր մոր վարկածն առաջին անգամ ստուգվել է միայն 2004 թվականին, և որ քննության ողջ տևողությունը եղել է չափազանց երկար:

88. Կառավարությունն ընդունել է, որ ոստիկանության աշխատակիցները ենթարկվել են կարգապահական տույժի քրեական գործով քննությունը ժամանակին չկատարելու համար: Քրեական գործի քննությունը դադարեցնելու վերաբերյալ նախնական որոշումներն արդարացված չեն եղել, և այդ իսկ պատճառով գործը փոխանցվել է Մոսկվայի Արևմտյան վարչական շրջանի քննչական բաժնին: Այդուհանդերձ, քննության ձգձգումը շարունակվել է, որն էլ հանգեցրել է քննիչ պարոն Շախովի գործից ազատմանը և քննիչ պարոն Կիրիևսկու և Մոսկվայի Արևմտյան վարչական շրջանի դատախազի տեղակալի կարգապահական տույժերին: Համապատասխանաբար գործը փոխանցվել է Մոսկվայի Արևմտյան վարչական շրջանի դատախազությանը: 2006 թվականի հունիսի 7-ին Մոսկվա քաղաքի դատախազը վերացրել է քննությունը դադարեցնելու վերաբերյալ որոշումը, և այն վերսկսվել է:

A. Ընդունելիությունը

89. Կառավարությունը հայտարարել է, որ գանգատը ներկայացվել է ժամանակից շուտ, քանի որ քննությունը դեռևս եզրափակված չէ վերջնական որոշմամբ: Համապատասխանաբար՝ դիմողը չի սպառել ներպետական միջոցները:

90. Դատարանը գտել է, որ Կառավարության առարկությունը պետք է միացվի գործի հանգամանքներին, քանի որ այն սերտ կապ ունի Պետության կողմից արդյունավետ քննություն չիրականացնելու առթիվ դիմողի գանգատի բուն էության հետ (տես՝ Mikheyev v. Russia, no. 77617/01,՝ 88, 26 January 2006): Այնուհետև Դատարանը նշել է, որ այս գանգատը ակնհայտորեն անհիմն չէ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 6-րդ մասի իմաստով: Ավելին, այն անընդունելի չէ որևէ այլ հիմքով: Ուստի այն պետք է ճանաչվի ընդունելի:

B. Գործի հանգամանքները

1. Կոնվենցիայի կիրառելի դրույթը

91. Փաստերի առնչությամբ Դատարանը գտել է, որ դիմողը ենթարկվել է հարձակման մեկ կամ մի քանի անձանց կողմից՝ ակնհայտ կոդոպուտի նպատակով: Նա ստացել է

ուժեղ հարված գլխին, ուշագնաց է եղել, ապա կոմայի մեջ է գտնվել երկար ժամանակ: Դատական բժիշկներն ստացված վնասվածքները ճանաչել են լուրջ՝ ներպետական դասակարգման համաձայն:

92. Տվյալ գործով դիմողի վնասվածքները չեն եղել անխուսափելի: Այս հետևությունը, այդուհանդերձ, ըստ էության չի բացառում նրա գանգատի քննությունը հոդված 2-ի հիմքով, որը ներառում է ոչ միայն դիտավորյալ սպանությունը, այլև այն իրավիճակները, երբ ուժի գործադրումը կարող է հանգեցնել, որպես ոչ դիտավորյալ հետևանք, կյանքից զրկելուն: Դատարանն արդեն քննել է գանգատներ այս դրույթի հիմքով, երբ ենթադրյալ տուժողը չի մահացել վիճահարույց վարքագծի արդյունքում (տես՝ *Makaratzis v. Greece* [GC], no. 50385/99,՝ 49, ECHR 2004 XI; *Isayeva and Others v. Russia*, nos. 57947/00, 57948/00 and 57949/00,՝ 174, 24 February 2005; and *İlhan v. Turkey* [GC], no. 22277/93,՝ 75, ECHR 2000-VII):

93. Այդուհանդերձ, դատական նախադեպերով սահմանվել է, որ բացառիկ հանգամանքներում չէ, որ ֆիզիկական ներգործությունը, որը չի հանգեցրել մահվան, կարող է առաջացնել 2-րդ հոդվածի խախտում: Գործադրված ուժի աստիճանը և ձևը, ինչպես նաև ուժի գործադրման նպատակը կարող են այլ գործոնների շարքում համապատասխան լինել, երբ գնահատվում է, թե արդյոք կոնկրետ գործով մահացու վերքերի հանգեցրած գործողությունները եղել են այնպիսին, որ փաստերն ընկել են հոդված 2-ով սահմանված երաշխիքների գործողության ներքո: Շատ գործերով, երբ անձի վրա հարձակվում են կամ վատ վերաբերմունք դրսևորում, նրա գանգատներն ավելի շուտ կվերաբերեն Կոնվենցիայի 3-րդ հոդվածին (տես, *mutatis*, *Makaratzis*,՝ 51, and *İlhan*,՝ 76, both cited above): Այս առթիվ Դատարանը կրկնել է՝ որպեսզի վատ վերաբերմունքն ընկնի 3-րդ հոդվածի ներքո, այն պետք է ունենա ծանրության նվազագույն աստիճան: Այս նվազագույն աստիճանի գնահատումը հարաբերական է: Այն կախված է գործի բոլոր հանգամանքներից, ինչպիսիք են՝ վերաբերմունքի բնույթը և տեսակը, դրա տևողությունը, դրա ֆիզիկական և հոգեկան ազդեցությունները և, որոշ դեպքերում՝ տուժողի սեռը, տարիքը և առողջական վիճակը (տես՝ *Saadi v. Italy* [GC], no. 37201/06,՝ 134, ECHR 2008 ...):

94. Դիմողը և նրա ընկերը հարձակման են ենթարկվել անձանոթ անձի կողմից, և նրանցից գողացել են մեծ գումար: Նրանք երկուսն էլ հարված են ստացել հետևից: Դատելով հարձակման ուղղվածությունից՝ պարզ է դառնում, որ հարձակվողը հարվածել է նրանց մինչև նրանք կկարողանային տեսնել նրա դեմքը: Այն բանից հետո, երբ դիմողն ընկել է, նրան չեն ծեծել և այլ կերպ չեն հարվածել: Սառը զենք չի կիրառվել պատահարի ընթացքում և չի եղել որևէ հանգամանք, որը ցույց կտար, թե կողոպտիչը նպատակ է ունեցել դիմողին զրկելու կյանքից: Ուստի Դատարանը գտել է, որ տվյալ գործը դուրս է 2-րդ հոդվածի բովանդակությունից: Այդուհանդերձ, նկատի ունենալով դիմողի ստացած վնասվածքների լրջությունը և դրանց երկարատև ազդեցությունն առողջության վրա՝ Դատարանը գտել է, որ ագրեսիայի այդ գործողությունը հանգեցրել է 3-րդ հոդվածով արգելված վատ վերաբերմունքի (համեմատությամբ *Beganović v. Croatia*, no. 46423/06,՝ 66, 25 June 2009, and *Šečić v. Croatia*, no. 40116/02,՝ 51, ECHR 2007 VI հետ):

95. Համապատասխանաբար՝ Դատարանը քննարկել էր այս գանգատը Կոնվենցիայի 3-րդ հոդվածի համատեքստում, համաձայն որի.

Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:

2. Համապատասխանությունը 3-րդ հոդվածին

96. Դատարանը նկատել է, որ դիմողը որևէ կերպ չի մեղադրել Պատասխանող պետության իշխանություններին այն հարձակման համար, որի զոհերն են եղել ինքը և իր ընկերը, ոչ էլ երևում է, թե իշխանություններն իմացել են կամ պետք է իմանային, որ դիմողը կարող էր երրորդ անձի կողմից ենթարկվել ֆիզիկական ոտնձգության ու չեն նախաձեռնել պատշաճ միջոցներ, որպեսզի ապահովագրեն նրան: Այդ հարձակման ներպետական քննությամբ հավաքված նյութերը, ինչպիսիք են հարևան սրճարանում տեղի ուստիկանության աշխատակիցների մասնակցությամբ կոլի առթիվ դիմողի մոր կողմից արված չստուգված հայտարարությունները, չեն կարող հանգեցնել պետական իշխանությունների ներկայացուցիչների կողմից հարձակման կամ դիմողի առողջական վիճակի հետ կապված այլ վիճահարույց բողոքի:

97. Այդուհանդերձ, Կոնվենցիայի 3-րդ հոդվածում ներառվող հարձակման հետ կապված Պետության որևէ պատասխանատվության բացակայությունը չի ազատում Պետությանն այս հոդվածի հիմքով ունեցած պարտականություններից: Կոնվենցիայի 1-ին հոդվածի հիմքով Բարձր պայմանավորվող պետությունների պարտականությունն է ապահովել, որպեսզի իրենց իրավագործության ներքո գտնվող յուրաքանչյուր ոք ունենա Կոնվենցիայով նախատեսված իրավունքներն ու ազատությունները, դրա հետ մեկտեղ, 1-ին հոդվածի համաձայն՝ Պետությունները պետք է միջոցներ ձեռնարկեն, որպեսզի իրենց իրավագործության ներքո գտնվող անձինք չենթարկվեն խոշտանգումների կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի՝ ներառյալ անհատ անձանց կողմից վատ վերաբերմունքի (տես՝ *Moldovan and Others v. Romania* (no. 2), nos. 41138/98 and 64320/01,՝ 98, ECHR 2005 VII (extracts); *M.C. v. Bulgaria*, no. 39272/98,՝ 149, ECHR 2003 XII; and *A. v. the United Kingdom*, 23 September 1998,՝ 22, Reports 1998 VI):

98. Ընդհանուր առմամբ, չի կարելի ասել, թե 1-ին հոդվածի ներքո Պետության պարտականությունը չի կարող մեկնաբանվել որպես պահանջ՝ ուղղված Պետությանը իր իրավական համակարգի միջոցով երաշխավորելու՝ մեկ անձի կողմից մեկ այլ անձի նկատմամբ երբևէ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունք թույլ չտալը, իսկ եթե դա տեղի է ունենում, ապա քրեական գործի քննությունը պետք է անհրաժեշտաբար իրականացվի առանձնահատուկ ձևով: 3-րդ հոդվածը պահանջում է, որ իշխանություններն իրականացնեն արդյունավետ պաշտոնական քննություն՝ կապված վատ վերաբերմունքի դրսևորման հետ, եթե նույնիսկ նման վերաբերմունքն իրականացված լինի անհատների կողմից (տես՝ *Ay v. Turkey*, no. 30951/96,՝ 60, 22 March 2005, and *M.C.*, cited above,՝ 151):

99. Չնայած Պետության դրական պարտականության ծավալը կարող է տարբեր լինել այն գործերով, երբ 3-րդ հոդվածին հակասող վերաբերմունքը գործադրվել է Պետության ներկայացուցիչների կողմից, ինչպես նաև այն գործերով, որոնց համաձայն հարձակումը կատարվել է անհատ անձանց կողմից (տես՝ *Beganović*, cited above,՝ 69), պաշտոնական

քննությանը ներկայացվող պահանջները նույնն են: Որպեսզի քննությունը համարվի արդյունավետ, այն պետք է, ըստ էության, հանգեցնի գործի փաստերի բացահայտմանը, ինչպես նաև պատասխանատու անձանց հայտնաբերմանն ու պատժին: Դա ոչ թե արդյունքի պարտականությունն է, այլ՝ միջոցներինը: Իշխանությունները պետք է իրենց հասու պատշաճ միջոցներ ձեռնարկեն միջադեպին առնչվող ապացույցները պահպանելու համար, ներառյալ, *inter alia*՝ ականատեսների հարցաքննությունը, դատաբժշկական ապացույցները և այլն: Իսկ քննության թերությունները, որոնք խարխլում են վնասներ հասցնելու պատճառների հաստատումը կամ պատասխանատու անձանց հայտնաբերելու պարտականությունը, հանգեցնում են այս չափանիշից դուրս մնալու ռիսկին, իսկ պատշաճ և հիմնավոր քննության պահանջն այս համատեքստում բարդանում է (տես՝ այլոց շարքում, *Mikheyev v. Russia*, no. 77617/01, 107 et seq., 26 January 2006, and *Assenov and Others v. Bulgaria*, judgment of 28 October 1998, Reports 1998-VIII, 102 et seq.): Կոնվենցիայի 2-րդ և 3-րդ հոդվածներին ենթակա գործերում, երբ պաշտոնական քննության արդյունավետությունն է դիտարկվում, Դատարանը հաճախ գնահատում է, թե արդյոք իշխանությունները բողոքների առնչությամբ համապատասխան ժամանակահատվածում գործել են պատշաճ կարգով (տես՝ *Labita v. Italy* [GC], no. 26772/95, 133 et seq., ECHR 2000-IV): Եզրակացություններ են արվել՝ կապված գործի հարուցման, ինչպես նաև ցուցմունքներ վերցնելու ուշացումների (տես՝ *Timurtaş v. Turkey*, no. 23531/94, 89, ECHR 2000-VI, and *Tekin v. Turkey*, 9 June 1998, 67, Reports 1998-IV), ինչպես նաև նախնական քննության տևողության հետ (տես՝ *Indelicato v. Italy*, no. 31143/96, 37, 18 October 2001):

100. Անդրադառնալով տվյալ գործի հանգամանքներին՝ Դատարանը նկատել է, որ տեղի բնակիչներն անմիջապես տեղեկացրել են ոստիկանությանն այն մասին, որ երկու տղամարդ ենթարկվել են բռնության: Չնայած ոստիկանության աշխատակիցների վարքագծին, որոնք դիմողին թողել են առանց օգնության, Դատարանը ստորև քննության կառնի այն հանգամանքը, որը վերաբերում է արդյունավետ քննության իրականացման պարտականությունն իշխանությունների կողմից իրականացված լինելու գնահատմանը, այն է՝ որ ոստիկանությունը չի կազմել որևէ զեկույց հանցագործության առթիվ կամ հարուցել գործ հարձակման դեպքի առթիվ՝ դրանից օրեր անց: Ավելին, Սոկոլինայա Գոռա ոստիկանության բաժանմունքը երկու հիվանդանոցներից ստացել է ահազանգ դիմողի և նրա ընկերոջ մարմնական վնասվածքների վերաբերյալ: Այդուհանդերձ, չնայած այն փաստին, որ դրանք պարունակել են լուրջ ցուցմունքներ քրեական հանցագործության վերաբերյալ, պաշտոնական քննությունն սկսվել է միայն 2001 թվականի հուլիսի 20-ին, այն է՝ 20 օր հետո:

101. Գործի քննության սկզբնական հետաձգումը հանգեցրել է ժամանակի կորստի և անհնարին է դարձրել դեպքին առնչվող ապացույցների պահպանումը: Ոչ ոք չի գնացել կամ գննել դեպքի վայրը, չի հարցաքննել դիմողին կամ պարոն Ն.-ին, չի փորձել պարզել ականատեսներին: Այդ բացթողումը հանգեցրել է կարգապահական վարույթների երկու գործող ոստիկանների նկատմամբ, որոնք պետք է կատարեին նախնական քննությունը: Ավելին, 2001 թվականի հոկտեմբերի 29-ի և 2004 թվականի փետրվարի 27-ի նամակները ցույց են տվել, որ նույնիսկ այն բանից հետո, երբ հարուցվել է գործը, մի

շարք գլխավոր քննչական գործողություններ, ինչպիսիք են դեպքի վայրի զննումը և հարևանությամբ ապրող անձանց հարցաքննությունը, տեղի չեն ունեցել: Տեղական իշխանությունները լռելյայն համաձայնել են այն փաստին, որ քննությունը եղել է ձգձգված, և որ այն իրականացվել է ցածր մասնագիտական մակարդակով և ի խախտումն քրեական դատավարության կանոնների:

102. Քննության համար պատասխանատվությունը դրվել է ոստիկանության և դատախազության տարբեր աշխատակիցների վրա՝ առնվազն երեք անգամ: Հինգ տարվա ընթացքում կայացվել են քրեական գործի քննությունը դադարեցնելու վերաբերյալ տասնհինգ-ից ոչ պակաս որոշումներ, որոնք վերացվել են վերահսկող դատախազի կողմից: Քննությունը վերսկսելու վերաբերյալ որոշումները մշտապես հիմնված են եղել հետագա առավել պատշաճ քննության պահանջի վրա: Այդուհանդերձ, այս կարգադրությունը ոչ միշտ է իրականացվել գործով զբաղվող քննիչների կողմից, իսկ քննիչ պարոն Վոլկի կողմից 2004, 2005 և 2006 թվականներին կայացված՝ քննությունը դադարեցնելու վերաբերյալ որոշումների մեծ մասը հիմնված էր միևնույն ապացույցների և պատճառաբանությունների վրա: Քննության ծավալն ամեն անգամ փոփոխվել է և ներառել են դեպքերի նոր տարբերակների ստուգումներ, ինչպիսին հարբած ոստիկանի ներգրավման վարկածն է, որն առաջ էր քաշվել դիմողի մոր կողմից՝ նրա սեփական փնտրտուկների արդյունքում:

103. Վերը նշված խիստ լուրջ հետևությունների լույսի ներքո, Դատարանը հանգել է այն եզրակացության, որ քննությունը չի անցկացվել հավուր պատշաճի, նպատակամետ կամ բավականաչափ բազմակողմանի: Դատարանը, հետևաբար, մերժել է Կառավարության առարկությունը՝ կապված ներպետական միջոցներն սպառած չլինելու հետ (Mikheyev, cited above, 121), և որոշել է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում՝ կապված այն հանգամանքի հետ, որ դիմողի վրա հարձակման առնչությամբ քննությունը չի եղել արդյունավետ՝ դատավարական առումով:

II. Կոնվենցիայի 3-րդ հոդվածի ենթադրյալ խախտում՝ կապված դիմողին ոստիկանության կողմից օգնություն չցուցաբերելու հետ

104. Դիմողը բողոքել է Կոնվենցիայի 3-րդ հոդվածի հիմքով՝ առ այն, որ օգնություն ցույց տալուց հրաժարված երկու ոստիկանների վարքագիծը հանգեցրել է անմարդկային և նվաստացնող վերաբերմունքի, և որ քննությունը չի հանգեցրել պատասխանատու անձանց պատժելուն:

105. Դիմողը հայտնել է, որ 2001 թվականի հուլիսի 30-ի գիշերը ոստիկանության աշխատակիցներ Զարովր և Վոլկովն իրեն բավարար չափով չեն զննել, որպեսզի համոզված լինեին, որ իր կյանքին վտանգ չի սպառնում: Նրանք չեն օգտագործել իրենց ռադիոկապը շտապօգնություն կանչելու համար: Տուժողներին այլ տեղ տանելու որոշումը ոչ միայն եղել է ոչ պրոֆեսիոնալ, այլ նաև հանգեցրել է դիմողի առողջական վիճակի հետագա վատթարացմանը, ինչպես նաև հարձակմանն առնչվող ապացույցների ոչնչացմանը: Նախնական և դատական քննությունները չեն բավարարել անկախության պահանջը ոստիկանության և տեղի դատարանների միջև սերտ կապերի պատճառով: Արդարացման արդյունքում ոստիկանության աշխատակիցներն իրենց

գործողությունների համար չեն կրել որևէ կարգապահական կամ այլ պատասխանատվություն:

106. Կառավարությունը՝ հիմնվելով Ներքին գործերի նախարարության դիտարկումների վրա, հայտնել է, որ դիմողի բողոքները՝ անմարդկային և նվաստացնող վերաբերմունքի վերաբերյալ չեն կարող 'օբյեկտիվորեն ստուգվել': Քննությունը եղել է բազմակողմանի և արդյունավետ: Ներքին քննությամբ չի հաստատվել օրենսդրության որևէ խախտում ոստիկանության աշխատակիցների կողմից, իսկ դատարաններն արդարացրել են նրանց:

Ընդունելիությունը

107. Կառավարությունը հայտարարել է, որ դիմողը չի սպառել ներպետական միջոցները, քանի որ նա չի ներկայացրել վերաքննիչ բողոք ոստիկաններին արդարացնող դատավճռի դեմ:

108. Դատարանը կրկնել է, որ վերաքննիչ բողոքը Ռուսաստանի քրեական օրենսդրության համակարգում իրենից չի ներկայացնում արդյունավետ միջոց, որը կարող է կիրառվել Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն (տես վերջերս կայացված v. Russia, no. 12365/03, ' 29, 22 February 2007): Այդ պատճառով Կառավարության առարկությունը ենթակա է մերժման:

109. Դատարանը կողմերի հայտարարությունների լույսի ներքո գտել է, որ գանգատը Կոնվենցիայի ներքո առաջ է քաշում փաստի և իրավունքի լուրջ հարցեր, որոնց լուծումը պահանջում է հանգամանքների քննություն: Ուստի Դատարանը եզրակացրել է, որ այս գանգատը հիմնականում անհիմն չէ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ մասի իմաստով: Չկան այն չընդունելու այլ հիմքեր:

Բ.Գործի հանգամանքները

1. Ենթադրյալ վատ վերաբերմունքի համապատասխանությունը 3-րդ հոդվածին

110. Դատարանը նկատել է, որ փաստերի առնչությամբ կողմերի միջև վեճ չկա: Հաստատված է, որ ոստիկանության աշխատակիցներ պարոն Զարովին և պարոն Վոլկովին կարգադրվել էր ստուգել փողոցում ընկած երկու երիտասարդներին վերաբերող տեղեկությունը: Ժամանելով դեպքի վայր՝ նրանք գտել են դիմողին անգիտակից վիճակում և նրա ընկեր Ն.-ին, որը նստած է եղել ուղղահայաց դիրքով, բայց չի կարողացել խոսել: Նրանք հաղորդել են ոստիկանության բաժին, որ պահանջվում է շտապօգնություն, ապա երկու տղամարդկանց փողոցից մի քանի մետր հեռու են տարել: Կողմերի միջև տարաձայնություն կա այն հարցում, թե արդյոք ոստիկանության աշխատակիցները տուժողներին թողել են աղբամանների կողքին, թե՝ այլ տեղ, սակայն այս հանգամանքն ունի ավելի շատ հուզական, քան իրավական նշանակություն, և դրա հստակ բնորոշումն ունի նվազ ապացուցողական նշանակություն Դատարանի գնահատման համար:

111. Ոստիկանության աշխատակիցներին այնուհետև արտագերատեսչական պահպանության բաժնի համակարգողի կողմից կարգադրվել է գնալ մեկ այլ վայր՝ ստուգելու համար մեկ անհազանգ: Այդ ժամանակ, երբ նրանք զեկուցել են

նասիկանության բաժին, նասիկանության հերթապահ աշխատակիցը տեղում չի եղել, իսկ նրան փոխարինել է օպերատիվ աշխատակից պարոն Վանչարինը: Վերջինս զանգը չի գրանցել գրանցամատյանում, ինչպես նաև չի կանչել շտապօգնություն և չի զանգահարել սթափարան: Հետևաբար, դիմողը ողջ գիշերն անցկացրել է շենքի բակում՝ մինչև որ առավոտյան շտապօգնությունը նրան վերցրել է:

112. Դատարանի խնդիրն է որոշել, թե արդյոք վերոթվարկյալ փաստերը բացահայտում են Պետական իշխանությունների կողմից Կոնվենցիայի 3-րդ հոդվածով արգելված խոշտանգման, անմարդկային և նվաստացնող վերաբերմունքի կանխման իր պարտականությունը չկատարելը, թե՛ ոչ:

113. Կոնվենցիայի 3-րդ հոդվածը նախատեսում է ժողովրդավարական հասարակության ամենահիմնարար սկզբունքներից մեկը: Այն բացարձակ կերպով արգելում է խոշտանգումը, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքը՝ անկախ հանգամանքներից և տուժողի վարքագծից (տես, օրինակ՝ *Labita v. Italy* [GC], no. 26772/95,՝ 119, ECHR 2000-IV00): Ինչպես նշվել է վերը, վերաբերմունքի լրջությունը կախված է շատ հանգամանքներից, ներառյալ՝ դրա բնույթը և ձևը, տևողությունը, ֆիզիկական և հոգեկան ազդեցությունը, իսկ որոշ դեպքերում՝ տուժողի սեռը, տարիքը և առողջական վիճակը: Հարցը՝ արդյոք վերաբերմունքի նպատակն է տուժողին ստիպել տառապել, քննարկման այլ առարկա է, սակայն ցանկացած նման նպատակ չի կարող արդյունքում անպայման հանգեցնել 322-րդ հոդվածի խախտմանը (տես, *Denmark, Norway, Sweden and the Netherlands v. Greece (the “Greek case”), applications nos. 3321/67, 3322/67, 3323/67 and 3344/67, Commission’s report of 5 November 1969, Yearbook XII, and Peers v. Greece, no. 28524/95,՝ 74, ECHR 2001-III*): Եթե նույնիսկ չի եղել դիմողին նվաստացնելու կամ վնասելու պոզիտիվ մտադրության որևէ ապացույց, ինչպես նաև վատ վերաբերմունքի մեջ ներգրավված առանձին մարմինների կողմից չի կատարվել որևէ խախտում, պետք է ընդգծել այն, որ Կառավարությունը պատասխանատու է Կոնվենցիայի ներքո ցանկացած պետական մարմնի գործողությունների համար, քանի որ այն, ինչ քննարկվում է Դատարան ներկայացված բոլոր գործերով, իրենից ներկայացնում է Պետությունների միջազգային պատասխանատվություն (տես՝ *Novoselov v. Russia, no. 66460/01,՝ 45, 2 June 2005, and Lukanov v. Bulgaria, 20 March 1997,՝ 40, Reports 1997-II*):

114. Դատարանը կրկնել է իր մշտական մոտեցումն առ այն, որ 3-րդ հոդվածը Պետությանը պարտավորեցնում է պաշտպանել անձանց ֆիզիկական անվտանգությունը, որոնք հայտնվում են անօգնական վիճակում իշխանությունների հսկողության ներքո գտնվելու հետևանքով, ինչպիսիք են, օրինակ, կալանավորվածները կամ զորակոչված զինծառայողները (տես՝ *Chember v. Russia, no. 7188/03,՝ 50, 3 July 2008; Sarban v. Moldova, no. 3456/05,՝ 77, 4 October 2005; Jalloh v. Germany [GC], no. 54810/00,՝ 69, ECHR 2006 IX, and Mouisel v. France, no. 67263/01,՝ 40, ECHR 2002-IX*): Այդուհանդերձ, հաշվի առնելով 2-րդ հոդվածի բացարձակ բնույթը, որի պահանջները թույլ չեն տալիս որևէ բացառություն, պաշտպանության այս պարտականությունը չի կարելի ասել, թե ունի որոշակի սահմանափակումներ զինվորական կամ ուղղիչ հաստատություններում: Այդպես է նաև այլ իրավիճակներում, երբ անձի ֆիզիկական անվտանգությունը մեծամասամբ կախված է իշխանությունների գործողություններից, որոնք օրենքի համաձայն պարտավոր են միջոցներ ձեռնարկել իրենց իրավասության

սահմաններում, ինչը կարող է անհրաժեշտ լինել կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելուց խուսափելու համար (տես՝ *in the similar context of a positive obligation under Article 2 of the Convention, Paul and Audrey Edwards v. the United Kingdom*, no. 46477/99, 55, ECHR 2002 II):

115. Տվյալ գործով իշխանությունները, անկասկած, իմացել են, որ դիմողը գտնվել է անօգնական և կյանքի համար վտանգավոր վիճակում: Ինչպես նշել է դատախազը քրեական գործ հարուցելու իր որոշման մեջ, ոստիկաններ Ջարովը և Վոլկովը դիմողին հայտնաբերել են անգիտակից վիճակում՝ դեպքի վայր ժամանելիս և, հետևաբար, չէին կարող մոլորության մեջ լինել՝ կապված նրա վիճակի ծանրության և ինքնություն իր մասին հոգալու նրա կարողության գնահատման հետ (տես վերը՝ 41-րդ կետ): Դատարանը գտել է, որ սկսած այն պահից, երբ ոստիկանությունն ստուգել է մասնավոր տների բնակիչների հայտնած փողոցում անգիտակից վիճակում ընկած երկու երիտասարդ տղամարդկանց մասին տեղեկությունը, իրավիճակը եղել է իշխանությունների հսկողության տակ, որոնք պարտավոր էին ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ կանխելու այդուհետև դիմողի կյանքին և առողջությանը պատճառվելիք վնասները:

116. Ռուսաստանի օրենսդրությամբ ոստիկանությունն ունի առհասարակ քաղաքացիների և, մասնավորապես, հարձակումների զոհերի և անօգնական կամ կյանքի համար վտանգավոր վիճակում հայտնված անձանց մասին հոգ տանելու և նրանց պաշտպանելու հատուկ պարտականություն: Անձանց նման օգնություն ցուցաբերելու պարտականությունը նախատեսված է ինչպես Ռոստիկանության մասին օրենքով (տես վերը՝ 82-րդ կետ), այնպես էլ Պարեկային ոստիկանության վերաբերյալ կանոնակարգով (տես վերը՝ 83-րդ կետ): Կանոնակարգը պարունակում է գործողությունների մանրակրկիտ ցանկ, որոնք պետք է իրականացվեն դեպքի վայր ժամանող ոստիկանների կողմից: Նրանք պետք է ցուցաբերեն տուժողին առաջին օգնություն, պարզեն նրա ինքնությունը, կանչեն շտապօգնություն, ինչպես նաև պահպանեն հայտնաբերված ապացույցները, այդուհանդերձ, առանց փոխելու տուժողի կամ նրան շրջապատող առարկաների դիրքը: Դատարանը նկատել է, որ շտապօգնություն կանչելը հստակ նշված է ավելի շատ որպես պարեկային ոստիկանի, քան ոստիկանության բաժնի հերթապահ ոստիկանի պարտականություն:

117. Տվյալ գործով ոստիկաններ Ջարովը և Վոլկովն ակնհայտորեն անտեսել են վերը նշված իրավական դրույթների պահանջները: Նրանք չեն քննել անգիտակից վիճակում գտնվող դիմողին՝ նրա վիճակի ծանրությունը կամ նման հանգամանքներում պահանջվող օգնության բնույթը պարզելու համար: Նրանք չեն կանչել շտապօգնություն կամ որևէ բուժօգնություն ցույց տվող մասնագետի, չնայած որ ունեցել են շարժական ռադիոկայան և կարող էին օգտագործել նաև իրենց բջջային հեռախոսները կամ հանրային հեռախոսները կամ խնդրել տեղի մասնավոր տների բնակիչներին հեռախոսներից օգտվելու համար: Կանոնակարգի առավել լուրջ խախտումը, որը, հավանաբար, շատ ավելի վատ ազդեցություն է ունեցել դիմողի ապաքինման վրա, եղել է դիմողին թևատակերից քաշելով այլ կողմ տանելը, արարք, որը հակասում է ինչպես օրենքին, այնպես էլ առաջին օգնության ամենահիմնական պահանջներին, ըստ որոնց արգելվում է գլխի կասկածվող վնասվածք ունեցող անձանց տեղափոխումը, ինչը ոստիկանության աշխատակիցները ենթադրաբար պետք է իմանային: Վերջապես,

նստիկանները լքել են դեպքի վայրը արտագերատեսչական պահպանության բաժնի համակարգողների հրահանգով՝ քաջատեղյակ լինելով, որ դիմողը գտնվում է անօգնական և կյանքի համար վտանգավոր վիճակում:

118. Ինչ վերաբերում է նրանց հրատապ հեռանալուն, Դատարանը գտել է, որ արտասովոր է, որ պարեկային ծառայությունը հանձնարարված էր այն ոստիկաններին, որոնց ուղղակի պարտականությունն էր գործելու որպես առևտրային պաշտպանության բաժինների աշխատակիցներ՝ կապված մասնավոր սեփականության պահպանման հետ(տես վերը՝ 84-րդ կետ): Ոստիկաններ Ջարովը և Վոլկովը թողել են դիմողին առանց հսկողության այն բանից հետո, երբ մասնավոր պահպանության բաժնի համակարգողի կողմից կարգադրվել է ստուգել մեկ այլ ահազանգ, որն ստացվել է այլ վայրից՝ կապված այլ անձի սեփականության հետ: Ինչպես ավագ ոստիկան պարոն Կ.-ն է բացատրել դատարանին, մասնավոր պահպանության բաժինների համակարգողների կարգադրությունները նախորդել են ոստիկանության բաժնի հերթապահ ոստիկանի կարգադրություններին (տես վերը՝ 49-րդ կետ): Դատարանի կարծիքով՝ այդ արարքը հանգեցրել է առաջնության մասին պատկերացումից խիստ շեղման, քանի որ դրա արդյունքում մասնավոր սեփականության պաշտպանությանը տրվել է դիմողի կյանքի պաշտպանության նկատմամբ առաջնայնություն կամ նախապատվություն:

119. Ավելին, Դատարանը նկատել է, որ կիրառելի դատավարական խախտումները հիմնականում տեղի են ունեցել Սոկոլինայա Գոռա ոստիկանական բաժանմունքում, հետո նաև՝ դատարանում: Պարզվել է, որ հերթապահ ոստիկանը տեղում չի եղել, նա իր փոխարեն թողել է պարոն Վանչարինին: Այդուհանդերձ, չնայած պարոն Վանչարինը նույնպես եղել է ոստիկան, սակայն նա իրավասու չէր փոխարինելու հերթապահ ոստիկանին: Պարոն Վանչարինը գրանցամատյանում չի գրանցել ոստիկաններ Ջարովի և Վոլկովի կողմից ստացված հեռախոսազանգը, ինչպես նաև չի ստուգել նրանց զեկույցն այն մասին, թե իրավիճակը եղել է հսկողության տակ, նա չի ձեռնարկել որևէ միջոց կապվելու հիվանդանոցի կամ առնվազն սթափարանի հետ և, վերջապես, նա այս իրավիճակի մասին ոչինչ չի ասել հերթապահ ոստիկանին՝ նրա վերադառնալուց հետո:

120. Ստացվել է այնպես, որ ոստիկանության երկու աշխատակիցները, որոնք փաստորեն տեսել են դիմողին անգիտակից վիճակում, լքել են դեպքի վայրը՝ առանց տուժողներին որևէ օգնություն ցուցաբերելու, մինչդեռ ոստիկանության բաժնում հերթապահ ոստիկանը չի ստացել որևէ տեղեկություն պատահարի մասին, քանի որ նա թույլ է տվել, որ իրեն փոխարինի ոչ իրավասու ոստիկան, ով չի հետևել պարեկային ոստիկանության զեկույցների հետ կապված սահմանված ընթացակարգին: Այս բազմաթիվ խախտումների չարաքաստիկ շրջանը հանգեցրել է նրան, որ դիմողն անգիտակից վիճակում ընկած է եղել փողոցում վեց կամ յոթ ժամ շարունակ, մինչև որ հայտնաբերվել է դոնապահի կողմից, և վերջապես ժամանել է շտապօգնությունը: Ռուսական իշխանությունների կողմից նման վերաբերմունքը Դատարանի գնահատմամբ կարող է բնորոշվել միայն որպես անմարդկային:

121. Այդ պատճառով տեղի է ունեցել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում՝ կապված դիմողի կյանքին և առողջությանը վնաս պատճառելը կանխելու ուղղությամբ իշխանությունների կողմից միջոցներ չձեռնարկելու հետ, ինչը հանգեցրել է անմարդկային վերաբերմունքի:

2. Քննության ենթադրյալ անհամապատասխանություն

122. Դատարանը գտել է, որ դիմողի առողջությանը հասցված վնասի վերաբերյալ բժշկական ապացույցը, շենքի բակում ողջ գիշեր անօգնական վիճակում մնալու մասին դիմողի անվիճելի հայտարարության հետ մեկտեղ, չնայած այն փաստին, որ ոստիկանությունը տեղյակ է եղել հարձակման մասին դեռևս ժամը 1-ին, հանգեցրել է վատ վերաբերմունքի ենթադրյալ պահանջին: Համապատասխանաբար՝ իշխանությունները պարտավոր են եղել իրականացնելու արդյունավետ քննություն այդ միջադեպի հետ կապված հանգամանքների առնչությամբ: Հետագա եզրահանգումների նպատակով Դատարանն անդրադարձել է քննության արդյունավետության պահանջներին՝ նշված վերը՝ 99-րդ կետում:

123. Դատարանը, նախևառաջ, նկատել է, որ իրավասու իշխանությունները խիստ դանդաղ են գործել ենթադրյալ վատ վերաբերմունքի առթիվ քրեական գործ հարուցելիս: Ոստիկաններ Ջարովի և Վոլկովի վարքագծին առնչվող նյութն առանձնացվել է 2002 թվականի հունվարի 6-ին դիմողի վրա կատարված հարձակման վերաբերյալ գործից, այսինքն՝ միջադեպից ավելի քան վեց ամիս անց, և միայն դիմողի մոր կողմից բողոք ներկայացնելու արդյունքում: Դատարանը կրկնել է այս առթիվ, որ կյանքի համար վտանգավոր իրավիճակների վերաբերյալ գործերով իշխանությունները պետք է գործեն իրենց նախաձեռնությամբ՝ հենց որ հարցի վրա է իրենց ուշադրությունը սևեռվում, և նրանք չեն կարող դա թողնել տուժողի հարազատների նախաձեռնությանը (տես՝ *and Audrey Edwards, cited above, 69*): Նախնական քննությունը դադարեցվել է այն անհիմն հետևության հիման վրա, թե ոստիկանությունը՝ բարեխիղճ մոլորության մեջ է եղել՝ կապված դիմողի՝ իր մասին ինքնություն հոգալու ունակության հետ, չնայած նրա անգիտակից վիճակում լինելուն: Միայն այդ որոշումը վերանայելուց և 2002 թվականի մարտի 15-ին վերահսկող դատախազի կողմից վերացվելուց հետո է քրեական գործի քննությունը փաստացի սկսվել:

124. Դատարանը բավարարված է այն առումով, որ քննությունն սկսվելուն պես իրականացվել է հավուր պատշաճի, և գործը հանձնվել է դատարան մեկ տարվա ընթացքում: Այդուհանդերձ, պարզվում է, որ գովելի պատշաճության քողի տակ իրականացվել է սահմանափակ և ոչ լրիվ քննություն: Քննության ընթացքում ոստիկանության աշխատակիցներ Ջարովը և Վոլկովը եղել են գործով միակ կասկածյալները: Դատախազները ջանք չեն գործադրել պարզելու, թե արդյոք ոստիկանության բաժնում հերթապահ ոստիկանը, որը պնդել է, որ ոչ իրավասու ոստիկանն է իրեն փոխարինել, կամ նրան փոխարինած պարոն Վանչարինը կարող էին պատասխանատու լինել դիմողին ժամանակին օգնություն ցույց չտալու հարցում:

125. Հստակորեն չի կարելի ասել, թե իրացվել է դիմողի՝ քննությանն արդյունավետորեն մասնակցելու իրավունքը: Հայտնի է, որ 2002 թվականի սեպտեմբերի 5-ին նա ստացել է տուժողի կարգավիճակ և ձեռք է բերել այդ դատավարական կարգավիճակի համար սահմանված իրավունքները, ներառյալ բողոք ներկայացնելու կիրավունքը: Այդուհանդերձ, պարզվում է, որ քննիչը չի պատասխանել, ինչպես նաև որևէ որոշում չի կայացրել նրա մանրամասն և պատճառաբանված միջնորդության վերաբերյալ՝ կասկածյալների վարքագծի առնչությամբ իրավական բնորոշումների սահմանման համար, կամ ի պատասխան նրա միջնորդությանը՝ քննությանը որպես

քաղաքացիական կողմ ներգրավելու մասին: Այդ երկու միջնորդություններն էլ ներկայացվել էին 2002 թվականի նոյեմբերի 27-ին, և քննիչը ստացել է հաջորդ օրը:

126. Նաև պարզվել է, որ գործը թուլացել է դատարանում, քանի որ մեղադրանքի կողմը չի պատրաստել հիմնավոր ապացուցողական հիմք դատարանի համար: Այդպիսով, մեղադրանքի տարրերից մեկն այն էր, որ ոստիկաններ Ջարովը և Վոլկովը սխալ տեղեկություն են հայտնել Սոկոլինայա Գոռա ոստիկանական բաժանմունք, որ ձեռնարկել են բոլոր միջոցները: Այդուհանդերձ, դատախազները չեն իրականացրել խաչաձև հարցաքննություն, մի կողմից, պարոն Վանչարինի և պարոն Կ.-ի, մյուս կողմից՝ պարոն Վանչարինի և հերթապահ ոստիկանի միջև՝ նրանց ցուցմունքների միջև առկա հակասությունները վերացնելու համար: Ի վերջո, դատարանը չի ընդունել պարոն Վանչարինի ցուցմունքը՝ այն համարելով անհիմն այն հիմքով, որ նա գործել է կիրառելի նորմերի խախտմամբ, ուստի շահագրգռված է եղել ճշմարտությունը թաքցնելու հարցում: Այն, որ դատախազությունը գերազնահատել է պարոն Վանչարինի ցուցմունքի ապացուցողական նշանակությունը՝ նրանց կողմից Սոկոլինայա Գոռա ոստիկանական բաժանմունքի ոստիկանների վարքագծի առնչությամբ քննություն իրականացնելու՝ վերոգրյալ բացթողման հետևանք է:

127. Վերջապես, Դատարանի կարծիքով՝ Շրջանային դատարանի պատճառաբանությունները չեն համապատասխանում քննությամբ հաստատված գործի փաստերին, քանի որ հաստատվել է, որ ոստիկաններ Ջարովը և Վոլկովը չէին կարող իմանալ, որ դիմողը գտնվել է կյանքի համար վտանգավոր դրության մեջ, քանի որ նրանք դեպքի վայրում մնացել են մի քանի րոպե՝ գիշերվա ժամին և որովհետև վնասվածքները տեսանելի չեն եղել: Այդ հետևությունը թույլ է այն անվիճելի փաստի հետ համեմատված, որ դիմողը եղել է անգիտակից վիճակում և չի կարողացել ինքնուրույն շարժվել, ինչն էլ ոստիկանների կողմից նրան փողոցից այն կողմ տանելու պատճառ է հանդիսացել: Նրա՝ անգիտակից վիճակում լինելու փաստը, որը չի վիճարկվել ոստիկանների կողմից, ակնհայտորեն անհամատեղելի է այն հետևության հետ, որ նրա դրության վտանգավորությունը և կյանքի ու առողջության համար առաջացած ռիսկը կարող էին չնկատվել: Մոսկվայի քաղաքային դատարանը, որը լսել է գործի վերաբերյալ վերաքննիչ բողոքը, չի ունեցել փաստական հանգամանքների պակաս, որով դատարանի արդարացման դատավճիռը մնացել է անփոփոխ:

128. Վերը նշված դիտարկումների լույսի ներքո Դատարանը գտել է, որ վատ վերաբերմունքի առնչությամբ քննությունը կատարվել է ուշացումով, որ դրա ծավալը եղել է ոչ բավարար, և որ դիմողի դատավարական իրավունքները չեն պահպանվել, որ քննությունը չի իրականացվել պատշաճ ապացուցողական և փաստական հանգամանքների հիման վրա: Համապատասխանաբար, ներպետական իշխանությունների կողմից իրականացված քննությունը չի կարող համարվել արդյունավետ: Ուստի դատավարական իմաստով տեղի է ունեցել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում՝ կապված դիմողի՝ ոստիկանության կողմից լքված լինելու առթիվ հայտարարությունների առնչությամբ իշխանությունների կողմից արդյունավետ քննություն չիրականացվելու հետ:

III. Կոնվենցիայի 13-րդ հոդվածի ենթադրյալ խախտում

129. Դիմողը բողոքել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի և 13-րդ հոդվածի հիմքով՝ առ այն, որ ինքը չի կարողացել ներգրավվել ոստիկաններ Զարովի և Վոլկովի դեմ քրեական գործի քննությանը ,որպես քաղաքացիական կողմ, որ նրանց արդարացումը եղել է անարդար, և որ քննությունն ունեցել է դատավարական թերություններ: Դատարանը նկատել է, որ միակ տարրը, որով տվյալ բողոքները տարբերվում են 3-րդ հոդվածի դատավարական կողմի տեսանկյունից արդեն իսկ քննված խնդրից, դիմողի համար վատ վերաբերմունքի դիմաց փոխատուցում ստանալու նպատակով քաղաքացիաիրավական միջոցի հնարավորության խնդիրն է: Դատարանը գտել է, որ այս գանգատն Կոնվենցիայի 13-րդ հոդվածի ներքո է (տես՝ *Chember v. Russia*, no. 7188/03, 66, 3 July 2008, and *Betayev and Betayeva v. Russia*, no. 37315/03, 125, 29 May 2008), համաձայն որի՝

Յուրաքանչյուր ոք, ում սույն Կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք:

130. Դիմողը հայտնել է, որ չի ունեցել արդյունավետ հնարավորություն փոխատուցման համար քաղաքացիական հայց հարուցելու նպատակով, քանի որ ներպետական դատարանները չեն հաստատել որևէ մեկի մեղքը: Քանի որ ոչ ոք չէր դատապարտվել, Ռուսաստանի քաղաքացիական օրենսգրքի հիմքով քաղաքացիական հայցի հարուցումը նույնպես ձախողվել է:

131. Կառավարությունը հայտնել է, որ դիմողը չի ներկայացրել միջնորդություն գործի նախնական քննությանը որպես քաղաքացիական կողմ ներգրավվելու վերաբերյալ քննության փուլում: Նա այդ միջնորդությունը ներկայացրել է դատական քննությունը սկսվելուց հետո, սակայն դատարանն իրավացիորեն մերժել է այն՝ հիմնվելով Քրեական դատավարության օրենսգրքի 44-րդ հոդվածի տառին, որը նման միջնորդություն թույլ է տալիս ներկայցնել մինչև գործի նախնական քննության ավարտը: Այն բանից հետո, երբ 2003 թվականի հուլիսի 4-ի Դաշնային օրենքով օրենսգիրքը ենթարկվել է փոփոխության՝ մինչև դատական քննության ավարտը միջնորդություն ներկայացնելու ժամկետը երկարացնելու առումով, դիմողը չի ներկայացրել իր միջնորդությունը: Այդպիսով, դիմողն իր տրամադրության տակ ունեցել է արդյունավետ միջոցներ, որոնք, սակայն, չի օգտագործել:

A. Ընդունելիությունը

132. Դատարանը գտել է, որ այս գանգատը հիմնականում անհիմն չէ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ մասի իմաստով: Նաև Դատարանը նշել է, որ այն անհիմն չէ որևէ այլ հիմքով: Ուստի այն պետք է ճանաչել ընդունելի:

B. Գործի հանգամանքները

133. Դատարանը կրկնել է, որ Կոնվենցիայի 13-րդ հոդվածը երաշխավորում է ազգային մակարդակում միջոցի հնարավորություն իրականացնելու՝ Կոնվենցիայով նախատեսված իրավունքները և ազատությունները՝ անկախ այն հանգամանքից, թե ինչպես դա կարող է իրականացվել ներպետական իրավական համակարգում: 13-րդ հոդվածի նպատակն է, այդպիսով, պահանջել ներպետական միջոցի իրականացում

Կոնվենցիայի հիմքով՝ վիճահարույց բողոքի՝ էությանն առնչվելիս և ապահովել պատշաճ իրականացում, չնայած որ Պայմանավորվող պետություններն ունեն որոշակի ազատություն որոշելու համար, թե ինչ ճանապարհով նրանք կարող են գործել այս դրույթի ներքո իրենց՝ Կոնվենցիայով նախատեսված պարտականություններն իրականացնելիս: 13-րդ հոդվածի ներքո պարտականության ծավալները տարբեր են՝ կախված Կոնվենցիայի հիմքով դիմողի գանգատի էությունից: Այդուհանդերձ, 13-րդ հոդվածով պահանջվող միջոցը պետք է լինի՝ արդյունավետ գործնականում, ինչպես նաև օրենքում (տես՝ *Cobzaru v. Romania*, no. 48254/99,՝ 80-82, 26 July 2007; *Anguelova v. Bulgaria*, no. 38361/97,՝ 161-162, ECHR 2002 IV; and *S̢heyla Aydın v. Turkey*, no. 25660/94,՝ 208, 24 May 2005):

134. Դատարանն արդեն իսկ գտել է, որ պետական իշխանությունները պատասխանատու են դիմողի նկատմամբ անմարդկային վերաբերմունքի համար, որն առաջացել է նրան՝ կյանքի համար վտանգավոր դրության մեջ լինելու ժամանակ օգնություն ցույց չտալու հետևանքով: Այդ պատճառով դիմողն ունեցել է վիճահարույց բողոք՝ 13-րդ հոդվածի իմաստով, իսկ իշխանությունները պարտավոր էին իրականացնելու արդյունավետ քննություն նրա՝ ոստիկանների դեմ ներկայացված բողոքների առթիվ: Վերը նշված պատճառով որևէ քրեական դատաքննություն չի կարող համարվել որպես 13-րդ հոդվածի համաձայն իրականացվող, որի պահանջներն ավելի մեծ են, քան 3-րդ հոդվածով նախատեսված քննություն իրականացնելու պարտականությունը (տես՝ *Cobzaru*, cited above,՝ 83, and, *mutatis mutandis*, *Buldan v. Turkey*, no. 28298/95,՝ 105, 20 April 2004, and *Tanrikulu v. Turkey*, no. 23763/94,՝ 119, ECHR 1999-IV):

135. Ավելին, ինչ վերաբերում է քաղաքացիաիրավական միջոցի հնարավորությանը, Դատարանն անհրաժեշտ չի համարել որոշել, թե արդյոք դիմողն ունեցել է արդյունավետ հնարավորություն ներգրավվելու քրեական գործի քննությանը որպես քաղաքացիական կողմ: Կարևորն այն է, որ այդ քննությունը հանգեցրել է ոստիկանների արդարացմանը: Այս առումով Դատարանը կրկնել է, որ արդեն իսկ մի շարք դեպքերում գտել է, որ Ռուսաստանի քաղաքացիական դատարանների համար չկա որևէ նախադեպային իրավունք, որը կարող է քրեական գործով մեղքի բացակայության հիմնավորման պայմաններում լուծել քաղաքացիական հայցի հարցը՝ կապված փաստված լուրջ քրեական գործողությունների հետ: Դատարանը գտել է, որ մինչ Ռուսաստանի քաղաքացիական դատարանները տեսականորեն ունեն հնարավորություն կատարելու փաստական և իրավական հարցերի անկախ գնահատում, պրակտիկայում քրեական գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքների կշիռն այնքան մեծ է, որ նույնիսկ բողոքողի ներկայացրած ամենահամոզիչ ապացույցը կարող է անտեսվել, և նման միջոցը կդառնա ավելի շուտ տեսական և պատրանքային, քան գործնական և արդյունավետ, ինչը պահանջվում է Կոնվենցիայով (տես՝ *Chember*, cited above,՝ 71; *Menesheva v. Russia*, no. 59261/00,՝ 77, ECHR 2006 III; *Isayeva v. Russia*, no. 57950/00,՝ 155, 24 February 2005; and *Isayeva and Others v. Russia*, nos. 57947/00, 57948/00 and 57949/00,՝ 147, 24 February 2005): Այն գործերով, երբ հանրային պաշտոնյաների դեմ քրեական գործի քննությունը կարճվում է մինչդատական փուլում կամ ավարտվում է արդարացմամբ, դիմողի համար հասու ցանկացած միջոց, ներառյալ վնասների փոխհատուցման համար հայցը,

սահմանափակում է հաջողության հասնելու հնարավորությունները և չի կարող դիտվել որպես դիմողին փոխհատուցում տրամադրելու հնարավորություն (տես՝ *Tarariyeva v. Russia*, no. 4353/03, '101, ECHR 2006 ... (extracts); *Dedovskiy and Others v. Russia*, no. 7178/03, '101, 15 May 2008):

136. Ուստի Դատարանը գտնել է, որ դիմողին զրկել են ոստիկանության անփութության պատճառով առաջացած վատ վերաբերմունքի վերաբերյալ իր բողոքի առթիվ արդյունավետ միջոցից: Համապատասխանաբար՝ տեղի է ունեցել Կոնվենցիայի 13-րդ հոդվածի խախտում:

IV. Բժշկական անփութության պատճառով Կոնվենցիայի 3-րդ հոդվածի ենթադրյալ խախտում

137. Դիմողը բողոքել է նաև 3-րդ հոդվածի ներքո՝ առ այն, որ թիվ 33 հիվանդանոցի բժիշկները չեն ցուցաբերել իր վիճակի ծանրությանը համապատասխան պատշաճ բժշկական օգնություն, և որ այս հարցը պատշաճ կերպով քննության չի առնվել:

138. Դիմողը հայտնել է, որ իր մայրը և այլ մյուս հարազատները տեսել են իրեն մերկ վիճակում պառկած պատգարակի վրա՝ թիվ 33 հիվանդանոցի միջանցքում: Նա մնացել է այդ վիճակում 2001 թվականի հունիսի 30-ի առավոտվանից մինչև առնվազն 2001 թվականի հուլիսի 1-ի՝ ժամը 18-ը: Ոչ ոք չի զբաղվել նրանով, և նա պատշաճ կերպով չի ախտորոշվել կամ ենթարկվել ռենտգենյան ճառագայթներով հետազոտման, միակ ախտորոշումը եղել է իր ընկերոջ հայտարարությունների հիման վրա: Ավելին, նա վարակվել է հեպատիտ C-ով՝ թիվ 33 հիվանդանոցում իրականացված վիրահատության ընթացքում կատարված արյան փոխներարկման հետևանքով: Դիմողն ընդգծել է այն, որ բժշկական անփութությունը թիվ 33 հիվանդանոցում նախնական բուժման ընթացքում հանգեցրել է կայուն անգործության: Պետությունը պետք է պատասխանատվություն կրի բուժման համար, քանի որ թիվ 33 հիվանդանոցը մունիցիպալ հաստատություն էր, որը տրամադրում էր բժշկական օգնություն հանրությանը:

139. Դիմողն այնուհետև հայտնել է, որ բժշկական անփութության առնչությամբ քննությունն սկսվել է դեպքից քսան ամիս անց, և որ այն տևել է չորսուկես տարի: Այդ ընթացքում կայացվել և ապա վերացվել է քննությունը կարճելու վերաբերյալ առնվազն յոթ որոշում: Թիվ 33 հիվանդանոցում իր բժշկական գործը կորել է: Դիմողը եզրակացրել է, որ քննությունը չի եղել պատշաճ, արդյունավետ կամ բավարար: Բացի դրանից, նրա ներգրավումը գործի քննությանը՝ սահմանափակ է եղել, և նա քիչ տեղեկություններ է ունեցել դրա ընթացքի մասին:

140. Կառավարությունը հայտնել է, որ դիմողի մայրը մի քանի անգամ բողոքներ է ներկայացրել թիվ 33 հիվանդանոցում տրամադրված բուժօգնության ոչ պատշաճ լինելու վերաբերյալ: Նրա բողոքները քննվել են 2001 թվականին և 2003 թվականին՝ Մոսկվայի կառավարության առողջապահության վարչության կողմից, և 2003 թվականի մարտի 5-ին հարուցվել է քրեական գործ: Դիմողի բժշկական գործի կորստի առթիվ առանձին գործը քննվել է Արևմտյան վարչական շրջանի դատախազի կողմից: Վերջապես, Կառավարությունը նշել է, որ 2006 թվականի նոյեմբերի 30-ին Մոսկվա քաղաքի դատախազը կարգապահական տույժի է ենթարկել պարոն Վոլկին բժշկական

անփութության վերաբերյալ քրեական գործի քննության ընթացքում չկոնկրետացված դատավարական խախտումների համար:

A. Ընդունելիությունը

141. Կառավարությունը հայտնել է, որ դիմողը չի սպառել ներպետական միջոցները, քանի որ նա բողոք չի ներկայացրել Մոսկվայի Իզմայլովոյի շրջանային դատարան՝ քրեական գործը կարճելու որոշման դեմ, ինչպես նաև բողոք չի ներկայացրել թիվ 33 հիվանդանոցի բժիշկների դեմ:

142. Դատարանը նկատել է, որ համաձայն Կառավարության իսկ փաստացի հայտարարությունների՝ բժշկական անփութության վերաբերյալ գործի քննությունը կարճելու մասին ամենավերջին որոշումը վերացվել է նույն օրը՝ վերահսկող դատախազի կողմից՝ քննության թերությունները վերացնելու հատուկ կարգադրությամբ (տես վերը՝ 77-րդ կետ): Քանի որ այդ որոշումը վերացվել էր, դիմողը պատճառ չէր ունեցել դրա դեմ դատարան բողոք ներկայացնելու համար:

143. Ինչ վերաբերում է բուժանձնակազմի դեմ քաղաքացիական հայց ներկայացնելու հնարավորությանը, Դատարանը կրկնել է իր՝ վերևում նշված հետևություններն առ այն, որ պարզվում է, որ ռուսական քաղաքացիական դատարաններն անկարող են քրեական գործի քննությամբ մեղքը չհաստատվելու դեպքում բավարարել վիճելի լուրջ հանցավոր գործողությունների վերաբերյալ քաղաքացիական հայցը (տես վերը՝ 136-րդ կետ): Տվյալ գործում քրեական գործի քննությունը չի հանգեցրել դատական քննության և դատապարտման: Համապատասխանաբար, քաղաքացիական հայցը չէր կարող համարվել արդյունավետ ներպետական միջոց, որին տիրապետում էր դիմողը (տես, հատկապես՝ *Tarariyeva, cited above*,՝ 101): Դատարանը մերժել է Կառավարության՝ ներպետական միջոցները սպառված չլինելու մասին առարկությունը:

144. Նաև Դատարանը նշել է, որ այս գանգատը հիմնականում անհիմն չէ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի իմաստով: Ավելին, այն անընդունելի չէ որևէ այլ հիմքով: Այդ պատճառով այն պետք է ճանաչել ընդունելի:

B. Գործի հանգամանքները

1. Բժշկական օգնության առնչությամբ 3-րդ հոդվածի կիրառելիությունը

145. Դիմողը բուժվել է թիվ 33 հիվանդանոցում 2001 թվականի հունիսի 30-ից մինչև հուլիսի 8-ը: Նրա հայտարարությունները՝ ոչ պատշաճ բժշկական օգնության մասին հիմնականում վերաբերում են սկզբնական շրջանին, որն սկսվել էր հունիսի 30-ին՝ ժամը 9-ից, երբ նրան բերել էին հիվանդանոց, և մինչև հուլիսի 1-ի՝ ժամը 18.30-ը, երբ իրականացվել էր գլխուղեղի վիրահատություն: Նա նշել է, որ իր հայտարարությունը չի վիճարկվել Կառավարության կողմից, որ ամբողջ այդ ընթացքում նա մերկ պառկած է եղել պատգարակի վրա հիվանդանոցի միջանցքում առանց բժշկական խնամքի:

146. Դատարանը նկատել է, որ թիվ 33 հիվանդանոցում դիմողի նկատմամբ ցուցաբերված բժշկական օգնության պատշաճության վերաբերյալ հարցը քննվել է փորձագետների երկու խմբերի կողմից: Առաջին խումբը, որը կազմված էր Պաշտպանության նախարարության դատաբժշկական փորձաքննության մասնագիտացված կենտրոնի փորձագետներից, գտել է մի շարք լուրջ թերություններ՝ կապված դիմողի հետազոտության և բուժման հետ: Երկրորդ խումբը, որը ձևավորվել էր

Մոսկվայի կառավարության առողջապահության վարչության կողմից, հերքել է առաջին խմբի հետևությունները և հաստատել, որ թիվ 33 հիվանդանոցի բուժանձնակազմն իրավացիորեն ձեռնպահ է մնացել որևէ միջամտությունից՝ մինչև որ հնարավոր է դարձել գլխուղեղի վիրահատություն կատարելը: Հաշվի առնելով, որ երկու խմբերի հետևությունները հակասում են միմյանց, քննությունը փորձել է կազմակերպել հաշտեցման քննություն: սակայն դա հնարավոր չի եղել թիվ 33 հիվանդանոցում դիմողի նախնական բժշկական գործի բացակայության պատճառով:

147. Քանի որ բժշկական օգնության վերաբերյալ հետևությունները հակասում են միմյանց, Դատարանը գտնել է, որ հետևյալ տարրերը հնարավորություն կտան որոշելու, թե որ հետևությունն է վստահելի: Նախ՝ սկզբնական հետազոտությունն իրականացվել է նախնական բժշկական գործի հիման վրա, մինչդեռ երկրորդ խումբն իր տրամադրության տակ ունեցել է այդ գործից որոշ հատվածներ, որոնք ներկայացված են եղել փորձագետների առաջին խմբի եզրակացության մեջ: Դատարանը մատնանշել է Ռուսաստանի դատաբժշկական դաշնային կենտրոնի ղեկավարի կարծիքը, որը հաստատել է, որ զուտ նախորդ հետևությունների վրա հետազոտություն կատարելն անտեղի է՝ ըստ դատաբժշկական մասնագիտական մեթոդների և չափանիշների (տես վերը՝ 74-րդ կետ): Երկրորդ՝ Դատարանը նկատել է, որ առաջին խմբի փորձագետներն աշխատել են Պաշտպանության նախարարության համար, որը պետական մարմին է և կապ չունի ոչ բժշկական հաստատության հետ, ոչ էլ քննություն իրականացնող մարմինների հետ: Ի հակադրություն, երկրորդ քննությունն իրականացվել է Մոսկվայի կառավարության առողջապահության վարչության կողմից, որն իրենից ներկայացրել է Մոսկվայի բոլոր քաղաքային հիվանդանոցներին, այդ թվում՝ նաև թիվ 33 հիվանդանոցին աջակցություն ցուցաբերող և դրանց նկատմամբ հսկողություն իրականացնող մարմին: Այս իրավիճակն առաջացրել է ակնհայտ հակասություն շահերի միջև և եղել է անհիմն այն պատճառով, որ փաստական բժիշկն ունի ձևական և փաստացի անկախություն (տես՝ *see Barabanshchikov v. Russia*, no. 36220/02, '59, 8 January 2009): Վերը նշված նկատառումներից ելնելով՝ Դատարանն առաջին խմբի հետևություններն ընդունում է որպես իր հետազոտությունների հիմք:

148. Համաձայն դատական բժիշկների եզրակացության՝ դիմողն ընդունվել է թիվ 33 հիվանդանոց չափազանց ծանր վիճակում, որը պահանջել է մեծ ուշադրություն և հրատապ հետազոտություն նյարդավիրաբույժի, թունաբանի և այլ մասնագետների կողմից: Փոխարենը, բուժանձնակազմը չի իրականացրել նույնիսկ ամենահիմնական միջամտությունները, որոնք պետք է իրականացվեին նոր հիվանդի դեպքում: Դիմողի վիճակը և նրա վնասվածքների բնույթն ու ծանրությունը նկարագրվել են մակերեսայնորեն և ոչ ամբողջական: Ալկոհոլային թունավորման ախտորոշումը հիմնված չի եղել արյան կամ մեզի հետազոտության վրա կամ թունաբանի կողմից կատարված հետազոտության վրա, այլ լոկ 'ալկոհոլային շնչառության' վրա: Ավելին, չնայած որ ներկայացվում էր, թե դիմողի արյան մեջ եղել է բարձր և հավանական մահացու ալկոհոլի բաղադրություն, չի նշանակվել և իրականացվել ապաթունավորական բուժում: Նյարդավիրաբույժը դիմողին տեսել է հիվանդանոց բերելուց միայն երկու ժամ անց, իսկ մինչև շտապ վիրահատական պատրաստություններն սկսելը երեսուներկու ժամ շարունակ դիմողն ըստ էության

մնացել է առանց խնամքի: Նա չի ենթարկվել 'օբյեկտիվ և պատշաճ հետազոտման' որևէ մասնագետի կողմից, նշանակվել է ռենտգենհետազոտություն, որը, սակայն, այդպես էլ չի իրականացել, նույնիսկ ջերմությունը չի չափվել:

149. Փորձագետները հաստատել են նաև, որ դիմողի պատշաճ բուժումը ժամանակին չիրականացնելը, ինչպես նաև նրան թիվ 33 հիվանդանոց բերելուն պես պատշաճ կերպով, ժամանակին չհետազոտելը հանգեցրել են նրա վիճակի լուրջ վատթարացմանը: Գլխուղեղի փոփոխությունները դարձել են անդառնալի և այնքան լուրջ, որ պահանջվել է շտապ վիրահատական միջամտություն կյանքը փրկելու համար: Փորձագետներն ընդգծել են, որ դիմողի դրության վատթարացման նկատմամբ վերահսկողության բացակայության հետևանքով միջամտությունը եղել է ուշացած: Պատշաճ կերպով հետվիրահատական հակաբակտերիալ բուժման բացակայությունը, ինչպես նաև ոչ պատշաճ հսկողությունը հանգեցրել են հետվիրահատական վերքերի առաջացման, ինչպես նաև գանգոսկրի բորբոքման:

150. Դատարանն ընդգծել է փորձագետների համաձայնությունն այն առումով, որ առկա է պատճառական կապ թիվ 33 հիվանդանոցում դիմողին ցուցաբերված բժշկական օգնության՝ նրանց մատնանշած թերությունների և առաջացած հաշմանդամության միջև: Չնայած որ նրանք համաձայն են եղել, որ համապատասխան մեթոդների բացակայության պայմաններում անհնարին կլինեք պարզել արդյոք դիմողի առողջական խնդիրները եղել են թերի բուժման և վերահսկողության արդյունք, թե առաջացել են գլխի վնասվածքի արդյունքում, նրանք միակարծիք են այն հարցում, որ թիվ 33 հիվանդանոցի բուժանձնակազմի լուրջ թերացումները հանգեցրել են բացասական հետևանքների:

151. Փորձագետների վերը նշված հետևությունների լույսի ներքո, որոնք չեն հերքվել Կառավարության կողմից, Դատարանը գտնել է, որ թիվ 33 հիվանդանոցում դիմողի բուժօգնությունը եղել է ոչ պատշաճ: Այդ պատճառով տեղի է ունեցել 3-րդ հոդվածի խախտում՝ կապված իշխանությունների կողմից դիմողին ոչ պատշաճ բուժօգնություն ցուցաբերելու հետ:

2. Քննության ենթադրյալ ոչ պատշաճ լինելը

152. Դատարանը նկատել է, որ հաշվի առնելով դիմողի կողմից անձամբ, ինչպես նաև նրա մոր կողմից արված լուրջ բժշկական անփութության վերաբերյալ հայտարարությունները, որոնք հիմնավորվել են դիմողի առողջությանը հասցված լուրջ վնասի առնչությամբ բժշկական ապացույցով, իշխանությունները պարտավոր էին եղել իրականացնել արդյունավետ քննություն թիվ 33 հիվանդանոցում դիմողի նկատմամբ իրականացված բուժօգնության բնույթի և ծավալի առթիվ: Հետագա հետազոտության նպատակով Դատարանը հղում է կատարել քննության արդյունավետության պահանջներին, որոնք նշված են վերը՝ 99-րդ կետում: Թիվ 33 հիվանդանոցից Բուրդենկոյի հիվանդանոց դիմողի տեղափոխվելուց ի վեր, ինչը տեղի է ունեցել դիմողի մոր նախաձեռնությամբ, վերջինս ներկայացրել է մի շարք բողոքներ թիվ 33 հիվանդանոցում ոչ պատշաճ բուժօգնության վերաբերյալ: Նրա բոլոր բողոքները մերժվել են առողջապահության վարչական մարմինների և դատախազների կողմից: Քրեական գործը հարուցվել է միայն 2003 թվականի մարտի 5-ին, այն է՝ իրադարձություններից երկու տարի անց: Դատարանը գտել է, որ ռուսական

իշխանությունները պատասխանատու են քրեական գործը ուշ հարուցելու, ինչպես նաև պատշաճորեն իրենց իսկ նախաձեռնությամբ գործելու հարցում, քանի որ նրանք հարցը թողել են միայն տուժողի հարազատների նախաձեռնությանը (տես՝ and Audrey Edwards, cited above, '69):

153. Քննության իրականացման ճանապարհը ցույց է տվել, որ քննությունն իրականացնող մարմինները գործել են հապճեպ և անփութ: Գործը շրջանառվել է իշխանությունների և քննիչների միջև, որոնք, ինչպես հարկն է, փորձել են կարճել քննությունը իբրև թե դատավարական հիմքերով: Երեք տարուց ավելի կայացվել են քննությունը կարճելու վերաբերյալ առնվազն տասը որոշումներ, որոնք բոլորն էլ պատշաճ կերպով վերացվել են վերահսկող դատախազի կողմից, քանի որ քննությունը կատարվել էր ոչ լիարժեք և ոչ բավարար ձևով: Որոշ քննիչներ ստացել են նկատողություններ կամ ենթարկվել են կարգապահական այլ տույժերի քննությունը քրեական դատավարության կանոններին համապատասխան չիրականացնելու համար:

154. Անհերքելի է, որ քննությունը եղել է նաև այն բանի պատճառ, որ թիվ 33 հիվանդանոցում կորել էր կարևոր ապացույց, այն է՝ դիմողի նախնական բժշկական գործը: Դրա անհայտացումն անհնարին է դարձրել ցանկացած հետագա դատաբժշկական հետազոտություն, ինչպես նաև հնարավոր չի եղել հաստատել պատճառական կապը թիվ 33 հիվանդանոցում դիմողին ցուցաբերված բուժօգնության վիճարկվող ոչ պատշաճության և առողջությանը հասցված վնասների միջև:

155. Վերջապես, չի իրականացվել դիմողի՝ քննությանն ակտիվորեն մասնակցելու իրավունքը: Նա տուժող է ճանաչվել 2005 թվականի սեպտեմբերի 6-ին, այն է՝ քրեական գործի հարուցումից երկուսուկես տարի անց: Մինչ այդ նա չի կարողացել իրականացնել այդ կարգավիճակին բնորոշ դատավարական իրավունքները, այն է՝ միջնորդություններ ներկայացնելու կամ փորձագետներին հարցեր ներկայացնելու իրավունքները (compare Tarariyeva, cited above, '93):

156. Վերը բացահայտված շատ լուրջ հետևությունների լույսի ներքո, Դատարանը գտել է, որ քննությունը եղել է ոչ պատշաճ, ինչպես նաև ոչ բավարար: Տեղի է ունեցել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում դատավարական խախտումների առումով՝ կապված ոչ պատշաճ բուժօգնության:

V. Կոնվենցիայի ենթադրյալ այլ խախտումներ

157. Վերջում, դիմողը բողոքել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով՝ առ այն, որ հարձակման և ոստիկանների ու բժիշկների կողմից օգնության բացակայության պատճառով, ոստիկանները և մարդու անվտանգության իր իրավունքը: Ապա նա բողոքել է Կոնվենցիայի 8-րդ հոդվածի հիմքով՝ իր բժշկական գործի անհայտանալու կապակցությամբ:

158. Դատարանը նկատել է, որ դիմողը փաստորեն երբևէ չի զրկվել ազատությունից, և որ տեղի չի ունեցել նրան առնչվող բժշկական տեղեկությունների հրապարակում: Համապատասխանաբար, այս բողոքները *ratione materiae* չեն համապատասխանում Կոնվենցիայի այդ դրույթներին 35-րդ հոդվածի 3-րդ կետի իմաստով, ուստի պետք է մերժվեն 35-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան:

VI. Կոնվենցիայի 34-րդ հոդվածով երաշխավորված անհատական միջնորդություններ կայացնելու իրավունքին ենթադրյալ խոչընդոտելը

159. 2007 թվականի մարտի 29-ին դիմողը ներկայացրել է բողոք, որում նշել է, որ Կառավարությունը ճնշում է գործադրել իր նկատմամբ՝ ի խախտումն Կոնվենցիայի 34-րդ հոդվածի: Նա հատկապես բողոքել է, որ Կառավարությունը վարկաբեկել է իրեն՝ հայտարարելով, որ ինքը հարձակման ժամանակ եղել է ակնոհուլային հարբածության վիճակում, որ իրեն չպետք է ընդունեին Մոսկվայի մասնագիտացված հոգե-նյարդաբանական հիվանդանոցում, որ իր մայրը կարգապահական տույժի է ենթարկվել իր աշխատավայրում, և որ քսաներեք տարեկան դառնալուց հետո զինծառայող հանդիսացած իր հոր մահվան կապակցությամբ նշանակված պետական թոշակի տրամադրումը դադարեցվել է:

160. Հետազոտելով դիմողի հայտարարությունները՝ Դատարանը չի գտել, որ դրանք կարող են հիմք հանդիսանալ Կոնվենցիայի 34-րդ հոդվածի ներքո անհատական միջնորդություններ կայացնելու իրավունքին ենթադրյալ խոչընդոտումը հաստատելու համար: Համապատասխանաբար, Դատարանը մերժել է այս գանգատը՝ այն համարելով անհիմն:

VII. Կոնվենցիայի 41-րդ հոդվածի կիրառումը

161. Կոնվենցիայի 41-րդ հոդվածի համաձայն՝

Շրժե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի փոխհատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել:

A. Վնասը

162. Նախևառաջ, դիմողը պահանջել է դրամական փոխհատուցում 2001 թվականի հունիսի 29-ից հիվանդության կապակցությամբ շարունակվող բուժման, ինչպես նաև ուշացած և ոչ պատշաճ բուժօգնության համար: Նա նշել է, որ իր համար պահանջվել է ամենօրյա խնամք բուժքրոջ կողմից (ենթադրաբար դրա արժեքն է 13,500 եվրո (EUO)՝ յուրաքանչյուր տարվա համար), պահանջվել է գումար՝ դեղորայքի համար (2,000 եվրո յուրաքանչյուր տարվա համար), ֆիզիոթերապիայի և պարբերաբար ստուգումների համար (13,925 եվրո յուրաքանչյուր տարվա համար), Գերմանիայում կամ Ավստրիայում վերականգնողական կուրսերի համար (13,200 եվրո երկու տարին մեկ) և բուժսարքավորումների համար (2,000 եվրո): Ապա պահանջ է ներկայացրել հնարավորությունների և եկամուտների կորստի համար՝ տարեկան 7,000 եվրոյի չափով: Բազմապատկելով երեսուն տարեկան հասակի համար կյանքի՝ նրա ակնկալիքները՝ նյութական վնասների փոխհատուցումը կազմել է 1,292,750 եվրո: Դիմողը պահանջել է նաև 200,000 եվրո ոչ նյութական վնասի դիմաց:

163. Կառավարությունը հայտարարել է՝ քանի որ հարձակման և բուժօգնության առնչությամբ գործերի քննությունը դեռևս շարունակվում է, դիմողը պահպանել է

փոխհատուցումը ներպետական մակարդակով պահանջելու իրավունքը, և որ նյութական վնասների փոխհատուցման նրա պահանջները համապատասխանաբար ժամանակից շուտ են ներկայացվել: Նաև այն նշել է, որ դիմողն ստացել է հաշմանդամության թոշակ, և որ նրան 2003 թվականին տրամադրվել են անվճար ուղևորություն առողջարան, զեղչված գնով ռուսական արտադրության ավտոմեքենա և վերջինիս համար ավտոտնակ: Կառավարության կարծիքով, եկամուտներից զրկվելու առումով դիմողի պահանջն անհիմն է, քանի որ այն վերաբերում է հետագա հնարավորություններին: Վերջապես, Կառավարությունը գտել է, որ ոչ նյութական վնասի վերաբերյալ բողոքը չափազանցված է և չի համապատասխանում Դատարանի նախադեպերին:

164. Դատարանը կրկնել է, որ լրիվ փոխհատուցման համար անհրաժեշտ գումարների մոտավոր հաշվարկը (*restitution in integrum*)՝ կապված նյութական վնասների հետ, որոնք կրել է դիմողը, կարող է կանխվել խախտումից բխող վնասի ըստ էության չճշտված բնույթից (տես՝ *Young, James and Webster v. the United Kingdom (former Article 50)*, 18 October 1982, Series A no. 55, ‘ 11): Փոխհատուցում կարող է տրամադրվել, չնայած հետագա կորուստների առումով անհստակությանը, չնայած որ որքան շատ ժամանակ է անցնում, այնքան անորոշ է կապը վնասի և խախտման միջև (տես՝ *Orhan v. Turkey*, no. 25656/94, ‘ 426 et seq., 18 June 2002): Նման գործերով լուծման ենթակա հարց է արդարացի փոխհատուցման մակարդակը՝ ինչպես անցած, այնպես էլ ապագա նյութական կորուստների համար, որն անհրաժեշտ է տրամադրել դիմողին և պետք է որոշվի Դատարանի կողմից՝ հաշվի առնելով անհրաժեշտությունը (տես՝ *see Sunday Times v. the United Kingdom (former Article 50)*, 6 November 1989, Series A no. 38, ‘ 15, and *Lustig-Prean and Beckett v. the United Kingdom (Article 41)*, nos. 31417/96 and 32377/96, ‘ 22-23, ECHR 2000):

165. Դատարանը նկատել է, որ նախորդ որոշ գործերով, որոնցում քննարկվել են ապագա վաստակների չափերը, Դատարանը հիմնել է իր հաշվարկները որոշ մակարդակի եկամուտների պահպանման պահանջների փաստացի հաշվարկման վրա, որոնք ներկայացվել են դիմողների ներկայացուցիչների կողմից (տես՝ *Aktaş v. Turkey*, no. 24351/94, ‘ 350, ECHR 2003 V, and *Orhan*, cited above, ‘ 433): Միևնույն մոտեցումը կարող է դրսևորվել ապագա եկամուտների հաշվարկման նկատմամբ: Տվյալ գործով, այդուհանդերձ, դիմողի կողմից պահանջվող ողջ գումարը հաշվարկվել էր ուղղակի բազմապատկելով տարեկան բժշկական ծախսերը Ռուսաստանում տարեկան միջին կենսաապահովման ծախսերով: Ապագա եկամուտների կորստի հետ կապված պահանջվող գումարը հաշվարկվել է նույն ձևով:

166. Ուստի նույնիսկ ընդունելով, որ դիմողի կողմից ներկայացված բոլոր հաշվարկները և տվյալները ճշգրիտ են, Դատարանը գտել է, որ տվյալ գործով կիրառված հաշվարկման միջոցը կապ չունի ապագա կորուստների հաշվարկման առնչությամբ Դատարանի ընդունած մոտեցման հետ (տես՝ *Mikheyev*, cited above, ‘ 161): Ավելին, նրա կորցրած եկամուտների հաշվարկը չի ներառում այն գումարը, որը նա ստանում է հաշմանդամության թոշակի ձևով: Այդ պատճառով, Դատարանը չի կարող ընդունել դիմողի կողմից պահանջվող վերջնական ձևաչափը:

167. Սակայն, հաշվի առնելով դիմողի վիճակի անկայունությունը, և փաստը, որ նա կրել է և կրելու է էական նյութական վնասներ հաշմանդամության և մշտական բուժման կարիքի պատճառով, Դատարանը ճիշտ է համարել տվյալ գործով դիմողին տրամադրել նյութական վնասի փոխհատուցում՝ հիմնված իրավիճակի նրա իսկ գնահատման վրա (տես՝ Mikheyev, cited above, ‘ 162): Հաշվի առնելով դիմողի դրության լրջությունը ու մասնագիտական և շարունակական բուժման կարիքը՝ Դատարանը տրամադրում է 75,000 եվրո՝ ոչ նյութական վնասի դիմաց, ներառյալ կիրառելի ցանկացած հարկ:

168. Ավելին, Դատարանը կրկնում է իր հետևություններն առ այն, որ ռուսական իշխանությունները պատասխանատու են եղել ոստիկանության գործողությունների համար, որը դիմողին լուրջ հարձակումից հետո թողել-հեռացել է առանց օգնություն ցուցաբերելու, ինչպես նաև բուժանձնակազմի կողմից նրա ծանր վիճակին համարժեք բժշկական օգնություն չցուցաբերելու համար: Իշխանությունները չեն իրականացրել դիմողի վրա հարձակման կամ ոստիկանության և բուժանձնակազմի կողմից բացթողումների հետ կապված արդյունավետ և բազմակողմանի քննություն իրականացնելու իրենց պարտականությունը: Այս իրադարձությունները պետք է դիմողին պատճառած լինեն ոչ միայն ֆիզիկական ցավ ու տառապանք, այլ նաև վախի, ֆրոստրացիայի, անարդարության հուզական զգացումներ, ինչպես նաև երկարաձգված անորոշության զգացում, ինչն առաջ է բերում փոխհատուցում՝ ոչ նյութական վնասի դիմաց (տես՝ as a recent authority, Varnava and Others v. Turkey [GC], nos. 16064/90, 16065/90, 16066/90, 16068/90, 16069/90, 16070/90, 16071/90, 16072/90 and 16073/90, ‘ 224, 18 September 2009, with further references): Գնահատելով անկողմնակալորեն՝ Դատարանը դիմողին տրամադրում է 78,000 եվրո ոչ նյութական վնասի դիմաց՝ ներառյալ ցանկացած կիրառելի հարկ:

Բ. Ծախսերն ու ծախսերը

169. Դիմողը չի ներկայացրել պահանջ ծախսերի և ծախսերի վերաբերյալ: Հետևաբար, կարիք չկա տրամադրելու փոխհատուցում այս առիթով:

Ա. Տուգանային տոկոսներ

172© Դատարանը նպատակահարմար է գտնում՝ որպեսզի տուգանային տոկոսը գանձվի Եվրոպական կենտրոնական Բանկի սահմանած փոխառության սահմանային տոկոսադրույքի հիման վրա՝ հավելված երեք տոկոս:

Այս հիմքերով Դատարանը միաձայն՝

1. Հայտարարում է դիմողի նկատմամբ կատարված հարձակման, ոստիկանության և բուժանձնակազմի կողմից նրան օգնություն չտրամադրելու առնչությամբ ոչ պատշաճ քննության, ինչպես նաև այս հարցերով քննության ոչ պատշաճ լինելու, քաղաքացիաիրավական միջոցի վերաբերյալ գանգատներն ընդունելի, մնացած մասը՝ ոչ ընդունելի:

2. Վճռում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում՝ դիմողի վրա հարձակման առթիվ իշխանությունների կողմից արդյունավետ քննություն չիրականացնելու հարցում:

3. Վճռում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում՝ դիմողին ոստիկանների կողմից օգնություն չցուցաբերելու հարցում:

4. Վճռում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում՝ ոստիկանության գործողություններն իշխանությունների կողմից արդյունավետ չքննելու հարցում:

5. Վճռում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 13-րդ հոդվածի խախտում:

6. Վճռում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում՝ կապված թիվ 33 հիվանդանոցում ոչ պատշաճ բժշկական օգնության հետ:

7. Վճռում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում՝ կապված բժշկական անփութության առնչությամբ արդյունավետ քննություն չիրականացնելու հետ:

8. Վճռում է, որ Կոնվենցիայի 34-րդ հոդվածի ներքո անձնական միջնորդություն ներկայացնելու իրավունքի իրականացմանը խոչընդոտելու վերաբերյալ բողոքը չի հաստատվել:

9. Վճռում է, որ՝

(a) Պատասխանող պետությունը վճիռը Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան օրինական ուժի մեջ մտնելու օրվանից երեք ամսվա ընթացքում դիմողին պետք է վճարի 75,000 եվրո (յոթանասունհինգ հազար եվրո) նյութական վնասի դիմաց և 78,000 եվրո (յոթանասունութ հազար եվրո)՝ ոչ նյութական վնասի դիմաց՝ սույն գործով վճռի կայացման օրվա դրությամբ կիրառելի տոկոսադրույքին համապատասխան ռուսական ռուբլիով:

ՔԻԲ որ վճարումը վերոհիշյալ եռամսյա ժամկետի ավարտից հետո կատարելու դեպքում չվճարված գումարի մասով պետք է հաշվարկվի տուգանային տոկոս» որը հավասար է չկատարված պարտավորության ժամանակահատվածում Եվրոպական կենտրոնական Բանկի սահմանած փոխառության սահմանային տոկոսադրույքին՝ հավելված երեք տոկոս:

10. Մերժում է արդարացի փոխհատուցման վերաբերյալ դիմողի պահանջի մնացած մասը:

Կատարված է անգլերեն և հրապարակված է գրավոր՝ 2009 թվականի դեկտեմբերի 17-ին՝ Դատարանի կանոնների 77-րդ կանոնի 2-րդ և 3-րդ կետերին համապատասխան:

Սորեն Նիելսեն

Քրիստոս Ռոզակիս

Նախագահող

Քարտուղար